3904
հայերեն

40

921-42

Madame [illegible]

8 Baker Street

Portman Square

London

[illegible] pour mes [illegible]

[illegible]

Հեղ. Չօպանեանէն եղ.

[illegible], էջ/6[illegible]2

2004

3904-Կ.2

# ՄԱՂԹԱՆՔ

## ՉԱՓԱՒ

15782-58
Հ.Ս.Խ.Հ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Առ Ազնուր Մամին Տիկին
Զարդ Մուրատեան ազգատոհմին
Մինչ բոլորի ոսկեդարինն ամ
Յորմէհետէ սիրելեաց բամ
Լայ զՎարդուհի նորին դստրիկ
Եղեալ զնմա վաղամեռիկ ,
Պատկանաւոր Մօրն և Դստեր
Ըղձողերգս զայս նուէր
Ի յիշատակ յաւերժական
Ընծայէ Ոսկան Մխիթարեան ։

Ի 24 ՍԵՊՏ. 1843





# ԱՂՕԹՔ
# ԱՌԱՒՕՏԵԱՆ

Աղօթք փէրուանական :

*Ո՜ ՀԱՅՐ մեր գըթած,*
*Որ զկայս եթերաց*
*Երանաւէտես*
*փառաց քոց 'ի տես,*
*Անուն քո լիցի*
*Սուրբ և պաշտելի,*
*Եւ ծանիցեն զայն*

Տիեզերք համայն ։
Զարքայութիւն քո
Մեզ երեւեցո ․
Եւ աստուածային
Կամք քո եղիցին
Որպէս 'ի յերկինս
Նոյն և 'ի ստորինս ։
Զհաց մեր առօրեայ
Եւ այս օր շնորհեա ։
Թո՛ղ ըզպարտիս մեր ,
Որպէս և մեք տէր
Տամք ամենեցուն
Պարտեաց թողութիւն ։
Մի՛ զտկարութիւն մեր
Ի փորձանս ածեր ․
Այլ կացո 'ի բաց

Յամենայն չարեաց.
Զի արքայութիւն
Քո մըշտ է մնայուն.
Քեզ փառք վայելէն
Յաւիտեանս ամէն:

## Աւետիք Հրեշտակապետին:

Ուրախ լեր, Մարիամ,
Լի շնորհօք սուրբ Հոգւոյն,
Աղախինդ Աստուծոյ,
Մայր և կոյս, քեզ ողջոյն:
Տէր ընդ քեզ, օրհնեալ ես
Ի կանանց դու 'ի գունդ.
Եւ օրհնեալ է Յիսուս
Արգանդի քո ծընունդ:

Սրբուհի Մարիամ,
Լեր վասն իմ եղկելւոյս
Յարաժամ բարեխօս
Այժմ և յելս 'ի մարմնոյս :

Աղօթք ————ւթիւն :

Ամենասուրբ Երրորդութիւն,
Հայր և Որդի և սուրբ Հոգի,
Քեզ փառք պատիւ և գոհութիւն.
Որ ինձ 'ի ժամ առաւօտուս
Մահահանգոյն 'ի ննջմանէ
Ետուր ողջամբ զարթնուլ 'ի լոյս :
Ի փառս քո և 'ի քո սէր
Զանձն և ըզգործս իմ զամենայն
Մատուցանեմ այսօր 'ի նուէր :

Յերեւելի ու աներեւոյթ
　Ի փորձութեանց պահես այսօր
　Ընդ հովանեաւ քո զիս անքոյթ ։
Տո՛ւր զօրըս զայս 'ի շնորհըս քո
　Անցուցանել առանց մեղաց ,
　Եւ հասանել ինձ յերեկոյ ։
Ներեա ինձ տէր , որ մինչեւ ցարդ
　Բարերարեալ 'ի քէն անդուլ՝
　Անցուցի զկեանս իմ տարապարտ ։
Եւ վատնեցի ըզժամանակն
　Ի քէն շնորհեալ 'ի գին արեան
　Առ 'ի հոգւոյս իմ փրկանակ ։
Յայսըմհետէ տուր ինձ սովաւ
　Վարել 'ի շահ հոգւոյս 'ի սպառ ,
　Եւ կեալ 'ի զեղջ և յապաշաւ ։

## Դաւանութիւն Հաւատոյ։

Խոստովանիմ հաւատով,
Ճշմարտութիւն անսխալ,
Որ ինչ 'ի ձեռն եկեղեցւոյ քո սրբոյ
Ինձ հրամայես հաւատալ.
Զի դու միայն ես Աստուած
Հաստիչ երկնի և երկրի,
Մի էութիւն յերիս անձինս համագոյ,
Հայր և Որդի և Հոգի։
Եւ զի Որդիդ վասն մեր
Իջեալ յերկնից եղեր մարդ,
Ըզչարչարանս յանձն առեր և զմահ,
Ի փայտ խաչին դատապարտ։
Յարեար յաւուր երրորդի,
Եւ 'ի յերկինս համբարձար։

Եւ զի դատել ըզկենդանիս և զմե-
ռեալս
Դարձեալ գալոց ես յաշխարհ,
Հատուցանել արդարոց
Որ ինչ բարիս խոստանաս,
Եւ փոխարէն մեղաւորաց յաւիտեան
Ըզդըժոխոց պատուհաս:

Խոստովանութիւն Յուսոյ:

Տէր և փրկիչ իմ Յիսուս,
Քանզի դու ինքն ինձ ետուր
Զարքայութեան քո ըզյոյս,
Յուսամ 'ի քէն աներկբայ
Գտանել 'ներումըն մեղաց
Որովք ընդդէմ քո յանցեայ.

Եւ հասանել փրկութեան
  Չարչարանօք քովք վասն իմ,
  Հանդերձ գործովք բարութեան,
Զոր յայտնեաց ջանացայց
  Գործել շնորհօք քո 'ի սպառ
  Եւ զգուշանալ 'ի մեղաց:

Խոստովանութիւն Սիրոյ:

Որ եղ աղբիւր բարութեանց,
  Եւ քան ըղձնաւ բարութիւնս
  Անհամեմատ գերազանց,
Որ յոչընչէ ստեղծեր զիս
  Եւ փրկեցեր արեամբ քով
  'Նորաստեղծեալ ըղձողիս.

Սիրեմ ըզքեզ տէր, այո,
Քան զամենայն սիրելիս,
Եւ զթըշնամիս վասըն քո։
Եւ յանձն առնում առաւել
Քան ըզթեթեւ ինչ յանցուած
Մահուանըս բիւր մեռանել։

## Խոստովանութեան Զղջման։

Տէր, զի դու միայն
Ես անհուն բարի,
Եւ դու ամենայն
Սիրոյ արժանի,
Զըղջամ բոլորով
Սրտիւ դառնապէս
Ընդ մեղս իմ յոլով
Որովք մեղայ քեզ։

Եւ զմահ տաւեղ
Յայսմհետէ ընտրեմ,
Քան թէ մեղանչել
Սիրոյ քո ընդդէմ:

Առաջին սիրոյ խուլն :

Ըղձենարար փարեալ խաչեւդ ,
Երկրպագեմ քեզ տէր Յիսուս ,
Յոր առ 'ի սէր մեղուցելոյս
Բեւեռեցար կեանքդ իմ և յոյս :
Ընդէր ոչ աչք իմ արտասուաց
Կրկնավտակ աղբերբք թանան
Զորդուառուովք թացերարեան,
Զենեալ մեղաց 'ի նմա փոխան :
Սիրտ իմ ընդէր ցրտասառայց
Ոչ բեկանի վիմացն հանդէտ ,

Յիշատակաւըն դառնաղէտ
Հոսեալ ընդ աչս արտասուաց գետ։
Ո՛հ արժանի եմ ես վըշտաց,
Եւ ողբալոյ միշտ յարաժամ,
Թէ ոչ այժմիկ գէթ մի անգամ
Ընդ մեղս իմ սաստ զըղջացեալ լամ։

Երգ սրբոյ Աստուածածնի։

Մեծացուցէ անձն իմ ըզտէր,
Եւ ցընծացէ ոգի իմ յԱստուած
մարդասէր.
Զի հայեցաւ յիս յաղախին իւր խո-
նարհ,
Եւ գըթութեամբ ինձ այց արար։
Ահաւասիկ երանեսցեն

Ինձ յայսմհետէ ազգք և ազինք համ_
օրէն .
Զի սքանչելիս արար ինձ աջ հզօրին,
Որոյ սուրբ է անուն նորին ։
Ողորմութիւն երկիւղածաց ,
Եւ զօրութիւն բազկի նորա յազգս
ազգաց .
Քակեաց զհզօրս 'ի գահոյից ,
Զամբարտաւան ցրուեաց խոր_
հուրդս 'ի սրտից .
Ըզխոնարհեալքըս բարձրացոյց ,
Եւ բարութիւ ըզկարօտեալըս լցոյց ,
Եւ զմեծատունս ունայն 'ի բաց
Ի յանըսպառ շնորհէ գանձուցն ար_
ձակեաց ։
Զողորմութիւն իւր յիշելով,

Իսրայէլի ած ծառային իւր գորով.
Որպէս խոստումն առ հարսն արար
Աբրահամու որդւոց նորա մինչ'ի
սպառ:

Յորդորակ :

Ահա կարդամք քեզ երանի,
Ըստ կանխասաց քումդ բանի,
Ո՜վ երանեալ դու 'ի կանայս,
Որ զնախամօրն լուծեր ըզվայս,
Եւ զփըրկութիւն մեր և ըզյոյս
Ածանց երկանց ծընար զՅիսուս:
Երանի քում որովայնին,
Եւ ստեանցդ որ զնա դիեցուցին.
Շըրթանցդ 'ի տիպ վարդին 'ի բոյր.

Որովք ետուր ՚նմին համբոյր.
Ձեռացդ անբիծ ամենևին,
Իւ գըգուեցեր զԱստուածորդին·
Աչօք աղաւնոյ հանդուճառակ,
Որովք ՚ի նոյն կէց բեր ՚ի բեր,
Եւ զմայլեիր ՚ի տեսութիւն
Ծածկեալ ՚ի նմա անճառ լուսոյն։
Խորասուզեալ շնորհաց ՚ի յուղխ
Զերծ յարատոյ պահեալ կանոնս,
Երանելի ամենեցուն
Եղեր, և ես, և լիցիս նոյն։
Այլ առաւել քեզ երանի,
Ո՛վ տէրունեայն լսող բանի,
Որ գեր ՚ի վեր բնաւից գոլով,
Հեզ և խոնարհ եղեր հոգւով։

## Առ Տիրամայրն իւր խանդաղատելի :

Զօրէն տղայոյ
Աղխկար 'ի ձեռմ,
Մայր սուրբ , ըղձեա քոյ
Թախանձ արկանեմ:
Ո՜հ , զի ոչ մերժէ
Մայր գորովագին
Ի սիրոյ իւրմէ
Զարտօսր որդեկին ,
Որ մօրն հետաղօտ
Բազմագայթ 'ի քայլս
Գլանցին 'ի ստորոտ
Կախի բուռն հարեալ :

Մայրենւոյդ գըրկաց
Չեմ ես արժանի ,
Եւ ոչ գըգուանաց
Սիրոյդ մայրենի ․
Ձեռն ինձ միայն տուր ,
Կացո զիս յոտին ․
Ա՛ծ անըստուերիւր
Յերկնընթաց ուղին ։



31001
3519



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
7 VI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
15782 58

### ԱՂՕԹՔ

## ԵՐԵԿՈՐԻՆ

*Երկրպագեմ քեզ և օրհնեմ ըզքեզ տէր ,*
*Որ զիս 'ի ժամն երեկոյիս հասուցեր,*
*Տալով այսօր զըղըստորէն ինձ ըղձայ*
*Եւ փրկելով զիս յամ փորձանաց ·*
*Որ և զհոգւոյդ պարգևեցեր ինձ շնորհ ,*
*Առ փրկութն հոգւոյ իմոյ կարեւոր ։*

Քո է պարգև եթէ այսօր ինչ բարի
Գործով բանիւ կամ խորհրդով արարի.
Իսկ եթէ չար, յինէն է այն, թող ինձ տէր,
Որ ապաշնորհ մեղք առ քոյդ գը-տայ սէր:
Քեզ ընդմարմնիս իմ յանձն առնեմ և զհոգիս,
Պահել ամբողջ յառաջիկայ գիշե-րիս:
Ամենօրհնեալ Ածածին Մարիամ,
Ապաւինիմ 'ի մայրենիդ քո 'ի խնամ:
Եւ դու զուարթուն հոգիդ որ կաս ցանկ առ իս,

Լեր պաշտպան ինձ 'ի հանգիստ
գիշերիս ։
Աստուածահայրդ Յովսէփ առ
քեզ պաղատիմ,
Դու բարեխօս ընդ սուրբս հա֊
մայն լեր վասն իմ,
Խաղաղութե՛ ննջել ինձ յայսմ
և 'ի սոյն ,
Եւ զարթուցեալ օրհնել ըզտէր
'ի յայգուն ։

Խղճի քննութիւն ։

Որ դատաւորդ ես
Ծածկելոց գիտող ,
Տէր , արա անտես
Ըզմեղս իմ և թող ։

Զի դիւրագայթ եմ
Եւ տըկար մարմին,
Պատկերըդ վըսեմ
Եղծեալ յիս նախնին։
Բաղում են մեղք իմ
Քան զաւազ անթիւ.
Այլ ես յայնց գարշիմ
Բոլորով սըրտիւ։
Մեղայ տէր յերկինս
Եւ առաջի քո.
Զարեան քո ըղձինս
Յիշեա և կեցո։

### Ի ՉԱՐՉԱՐԱՆՍ ՔՐԻՍՏՈՍԻ :

Առ քեզ անկեալ պաղատիմ
Որ բեւեռեալ 'ի խաչի
Բազկատարած կաս վասն իմ:
Օրհնեմ ըզսէր քո անճառ .
Այլ ինձ հիքիս բիւր աւաղ,
Զի ես կորիցդ եմ պատճառ :
Հիմ'ի լերինն աղօթէիր ,
Ողոռնաձեւ քիրտն արեան
Տէրդ 'ի դիմաց քոց հեղէր ,
Բայց զի զոհիս իմ կանխաւ
Եւ զապախտին իմ առ քեզ
Տեսանէիր զառաջեաւ :

Ո՛ գթեղ, փրկիչ իմ Յիսուս,
Դատապարտեալ առ 'ի մահ,
Բայց մեղք 'ի քէն հատուցելոյս :
Ո՛ գթեղ կապեալ կաշկանդեալ.
Ոչ զինուորք ոչ դահիճք,
Այլ հոյլք իմոց յանցանաց :
Ո՛ անողորմած ապտակ
Յաստուածային դէմս քո.
Բայց մեղք իմ ո՛հ զըժընդակք :
Ոչ 'ի Թուք պիղծ բերանոյն
Քոյդ անարգեալ կերպարան,
Այլ 'ի մեղացս իմ անհուն :
Ո՛ զկուսածին քոյդ կեան
Ընդ ձաղկանօք կեղեքեալ,
Թէ ոչ մեղացս իմ խուժան :

Ո՛ զերկնաստեղծ յանխուք քամք
Պսակ 'ի փշոց բոլորեաց ·
Մեղք իմ ծանունք և յոլովք ։
Ո՛ զփայտ խաչի յուս քոյին
Եբարձ Աստուած իմ և տէր ·
Եթէ ոչ մեղք իմ 'նոքին ։
Ընդէր անկար 'ի յերկիր ·
Բայց զի և զմեղս իմ 'ի յուս
Զոյգ ընդ խաչին բերէիր ։
Ո՛ զքոյդ մերկեալ ըզմարմին ,
Արկեալ ըզձեռն ամպարիշտ
Ցերկնաւորաց պաշտելին ։
Ո՛ զքո , փրկիչ իմ Յիսուս ,
Զըզատեալ բազկացդ ըզդաստակ
Ի տուարատուր 'ի հեղոյս ,

Եւ զուրս քո, յորս 'ի գնաց
  Երկինք ւերկիր դըղըրդին ,
  Ի փայտ խաչին բևեռեաց ։
Ո՛հ, զամենայն մեղք հերքես·
  Ես արարի զամենայն ·
  Ներեա , Յիսուս , գըթա յիս ։
Հիմ ըղլեղին գառնութեան
  Արբեր փրկիչ իմ Յիսուս ,
  Այլ ընդ մեղաց իմ փոխան ։
Ո՛հ ես ըզքեզ 'ի խաչին
  Նախատեցի ընդ Հըրեայս ,
  Եղէ ապանող ես քոյին ։
Եւ զկողդ , Աստուած իմ և տէր ,
  Ոչ տէգն եհերձ զինուորին ,
  Այլ ես հարի կարեվէր ։

Յինէն կրեցեր զամենայն ,
Ընդ իմ ըղձմանց յանձն առեալ
Վճան իմ իջեր 'ի գամբան :
Մ՚եղայ քեզ տէր , մեղայ քեզ .
Գարշիմ մերժիմ 'ի մեղաց ,
Զըզջամ բոլոր 'ի սրտէս :
Ես յայտնեալ քո փոխան ,
Ես փոխանակ քո մեռայց
Քան մեղանչել յաւիտեան :
Լիցի ինձ մահ քո և վիշտ
Ցօղս և ափոփումն յայտնեալ ,
Հանդէպ աչաց իմոց միշտ
Կեանքդ իմ կախեալ ըղձիւայտէ :

Առ սուրբ Թէրամայրն, տապանածործն
Ի Գէրգին Իւր, Իղձք:

Աստուածածին մայր և կոյս,
Դու գեղեցիկ ես քան զարփինենին
արշալոյս,
Որ ըղձուշան և ըղձլարդ
Մարգարտայեա ալըծնէ ցօղով գե-
ղազարդ:

Ո՛վ տիրուհի կոյս և մայր,
Դու գեղեցիկ քան զարուսեակն ես
պայծառ,
Յորմէ ծածկին փախըստեայք
Բոյլք աստեղաց, մինչ նըշողէ նա
ընդ այգ:

Ո՛վ մայր էին անեղի,
Դու և քան զաստղըն գիշերոյ գե-
ղանի,
Որ ըզարթուրն հերձեալ քող,
Պըծ՛նէ ըզցէմս երկնից 'ի զուարթ
խուր 'ի շող:

Ոչ առաւել ինչ առ քե
Քան ըզխաւար լուսապայծառն է
արե,
Որ գերահրաշ 'ի պատկեր
Գունազեղէ զերկիր ըզծով և զե-
թեր:

Այնմ որ 'ի քոյդ հանգչի ծոց,
Ի մայրենից ըզձեռան արկեալ պա-
րանոց,

Որ զքեզ պըճնէ գեղեցիկ
Ցօղ առաւել քան թէ զըստեղն
իւր ծաղիկ .

Ջորոյ ըղձեմն անդադար
Ամփոփ շըրթամբք քով համբուրես
սիրաբար ,
Գէթ միանգամ և ինձ տուր
Խանդաղակաթ մատչել՚նըմին՚ի համ-
բոյր :

Այլ ո՞հ շըրթունքս իմ և իղձք
Ապականեալ բիւր յանցանօք են և
պիղծք .
Ո՛հ ես յանդուգն եմ և խօլ ,
Զանձն արժանի թէ համարիմ շնոր-
հիդ գոլ :

Մի՛, մայր, մի՛ լինձ 'ի համբոյր
Տացես մատչել նորին շրթամբքս
անմաքուր․

Այլ մինչ դու գնա համբուրես,
Գէթ միանգամ տաս նորին դու այս-
պէս․

Զայս ոչ ես մայր քո միայն,
Այլ յորդեգրաց խմբից ընդ իս մին
համայն

Քեզ ընծայէ ըղհամբոյր,
Եւ գըղջական ընդ համբուրին ըղ-
սիրտ իւր ։

Իղձք ցաւակցութեան եօթանց ցաւոց սուրբ Աստուածածնին :

---

Ի Կիւրակէ :

Մայր ցաւագին,
Հա՛ր ըղձակիրս իմ ցաւով քոյին
Զոր կրեցեր 'ի տաճարին,
Յորժամ գուժեաց քեզ ծերունին
Զանցքս որդւոյն ընդ քում անձին :

Երկուշաբթի :

Մայր ցաւագին,
Հա՛ր ըղձակիրս իմ ցաւով քոյին,
Զոր յԵգիպտոս 'ի փախստանին
Կրեցեր յածել զաստուածորդին :

ՅԵՐԵՔՇԱԲԹԻ :

Մայր ցաւագին ,
Հա՛ր ըղձերս իմ ցաւով քոյին ,
Զոր առ 'ի գիւտ
Կորուսելոյ կրեցեր որդւոյդ :

Ի ՉՈՐԵՔՇԱԲԹԻ:

Մայր ցաւագին ,
Հա՛ր ըղձերս իմ ցաւով քոյին ,
Զոր 'ի տեսիլ որդւոյդ կրեցեր ,
Մինչ խաչ 'ի յուս բարձեալ տանէր:

Ի ՀԻՆԳՇԱԲԹԻ :

Մայր ցաւագին ,
Հա՛ր ըղձերս իմ ցաւով քոյին ,
Զոր 'ի տեսիլ որդւոյդ կրեցեր ,
Կալով խաչին քո առընթեր :

Յ[illegible] ։

Մ՛այր ցաւագին,
  Հա՛ր ընդմիր իմ ցաւով քոյին,
  Զոր կրեցեր խոցմամբ կողին,
  Եւ ընդմեռեալ որդւոյդ մարմին
  Մինչ 'ի խաչէն վայր իջուցին ։

Ի [illegible] ։

Մ՛այր ցաւագին,
  Հա՛ր ընդմիր իմ ցաւով քոյին,
  Զոր 'ի Թաղման քո միածնին
  Յիշատակաւ կրեցեր նորին ։

## ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ։

Որ կենդանեաց և մեռելոց ես
խնամող,
Եւ նորոգես զլուծեալ մարմինս իմ
'ի հող,
Որ զդըժոխոց աղարտեցեր զաղխեալ
նիգս,
Եւ շիջուցեր զմահուն խայթոց դառ-
նաձիգ.
Որ դու ես կեանք և յարութիւն մա-
հացուաց,
Յոյս քաւութեան զըղջացելոց 'ի մե-
ղաց.
Որ 'ի խաչին ընկալեցար վասըն մեր,

Եւ զպատուական 'ի նմա զարիւն քո հեղեր.
Լո՛ւր դատաւոր արդար, և հայր բարեխնամ,
Որ 'ի խորոց սրտի առ քեզ աղէր կարդամ:
Աղաչանօք ծնողի և մօր քո կուսի,
Եւ սուրբ խաչի քո զոր բարձեր 'ի յուսի,
Եւ ամ՛ սրբոց քոց ամեր որ հանգչին
Պայծառացեալք արդ 'ի կամարս երկնային,
Ա՛նդր ըղձողիս ննջեցելոց մեր ընկալ,
Որ կան 'ի բանդ քաւարանին արգելեալ:

Որ զմեղուցեալ ըզմարդն, Աստուած իմ և տէր,
Եւ ըզմեղք մեռեալ մարմնին յարուցեր.
Որ առ շիրմաւն արտասուեցեր Ղազարու,
Ի ձեռանէ Թափեալ զաւարն ըզմահու,
Յիշեա ըզծնօղս իմ և զեղբարս և ըզքորս,
Եւ որք ծընեան զիս 'ի յերկուսն հոգևորս.
Եւ զնընջեցեալսն 'ի քեզ ուղիղ հաւատով,
Որ ազգականք և որ ծանօթքն ինձ գոլով,

Կեալ նախ քան զիս լցին զընթացըս
 կենաց ,
Եւ կեալ 'ի նոյն ասպարէզ ինձ զուգ-
 ընթաց ։
 Հաշտեաց 'ի ձեռըն սուրբ մար-
 մնոյդ և արեան ,
Եւ արժանի արա զնոսա քաւու-
 թեան ,
Որք ինձ բարի 'ի կենցաղումս արա-
 րին ,
Եւ որք ինչ չար ըստ պատրանաց
 բանսարկուին ,
Ոյց ես պատճառ ոչն եղէ թերեւս պատ-
 ճառ ,
Հրապոյրք չարեաց կամ օրինակ տա-
 լով չար ։

Յիշեա յիշեա զհաւատացեալս
համօրէն ,

Յորոց կարգայ յորմէ ազգէ և ի-
ցեն .

Զամենեցուն յիշեա զհոգիս և հան-
գո ,

Զի գործք ձեռաց են քոց և գինք ա-
րեան քո .

Զի քո խաչիդ հաւատացին յաշխար-
հի ,

Եւ յարութեանդ որ ընտրելոց քոց
պարծի .

Զի ծնեալք 'ի սուրբ աւազանէն շնոր-
հիւ քո ,

Հաղորդեցան արեան փրկչիդ և մար-
մնոյ :

Որ ըղձողիդ քո սուրբ ետուր
մեզ Յիսուս,
Յիշեա զնոցա հաւատս 'ի քեզ և ըզ-
յոյս․
Եւ դասեցո 'ի խորանի այդր 'ի քում
Զհոգիս նոցա ընդ սուրբս 'ի կեանս
յանդորրաւում,
Ընդ բազմերամս հոգեղինաց զուգա-
պար
Երգել քեզ փառս, և արդարոցն ընդ
գումար
Որ յաւիտեան երանաւէտք անդ ըզ-
քոյդ
Փառաւորեն զանուն ընդ Հօր և Հո-
գւոյդ ։



## ԱՂՕԹՔ

Նախ քան [illegible]:

Գոհանամ ըզքէն, ով իմ Տէր,
Որ զիս 'ի ժամս յայս դարձեալ
հասուցեր,
Զի կարող եղէց նախ քան շըն-
չոյս ելն
Ըզմեղս իմ առ քեզ խոստովան
լինել:

Մեղայ ստեղծողիդ անարգըս մեղայ.
Թո՛ղ ինձ ըզմեղս իմ և անտես արա.
Մեղայ քեղ փրկչիդ իմ մարդա-
սիրի,
Ընդունայն ըզշնորհս Հոգւոյդ
վատնեցի:
Զըղջամ ընդ մեղս իմ բոլորով սըր-
տիւ,
Որ են քան զաւազ յոլով և ան-
թիւ.
Քան 'ի յահաւոր պատժոց դը-
ժոխոց,
Եւ քան 'ի յորդոր անճառ խոստ-
մանց քոց,
Այլ 'ի սէր քոյին, տէր և ած իմ,

Զըղջամ 'ի նոցունց և 'ի քոց գար-
շիմ.
Ըզմահ յայսմհետէ սիրով ընդ-
գըրկեմ,
Քան թէ մեղանչել սիրոյ քո ընդ-
դէմ:
Ահա արդ մատչիմ յուսով թողուն,
Քում փոխանորդիդ պատմել զա-
մենայն:
Ըզմոռացեալս դու լըցո զթերին,
Եւ լըցցէ հեղումն արեանդ 'ի խա-
չին:
Ոչ եմ արժանի մեղաց թողութեան,
Այլ 'ի վերըս քո լինիմ ապաստան:
Ըզսուղ հատուցումն, ըստ կարի
խմում

Կարգեալ ինձ 'ի տոյժ , սիրով
　յանձն առնում ։
Ընկալ վերջատին զիս 'ի շնորհըս քո ,
　Բարեխօսութբ̃ մօր քո օրհնելոյ ։
　Եւ քեզ փառք պատիւ երկրպագութիւն ,
　Ընդ Հօր քում յաւէտ և ընդ սուրբ Հոգւոյն ։

Աղօթք զղջման ։

Հայր , ես որդի քոյին եմ այն ,
　Որ ըզշնորհաց քոց վատնեալ ձիր ,
　Եւ ընդ ուղին հեռաեալ լայն ,
　Կեցի 'ի քէն ցարդ տարագիր ։
Այլ զդատապարտ արդ վերջատին ,
　Դառնամ առ քեզ Հայրըդ գթած.

Ընկալ զիս մի՛նդ որդիս քոյին ,
Այլ իբր ըզմի 'ի վարձկանաց ։
Զեմ արժանի քոյ գըրգուանաց .
Հա՛յր զիս , արա զիս գանակոծ ,
Շատ է զի մի 'ի սպառ 'ի բաց
Զիս մերժեսցես յերեսաց քոց ։

---

ԶԻՆԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ։

Բարձր առնեմ ըզքեզ ա՜ծ իմ և տէր,
Զի ընկալար զիս ,
Եւ ոչ յիս զոսոխն ուրախ արարեր ։
Կարդացի առ քեզ փրկիչ իմ և յոյս,
Եւ 'ի գըժոխոց
Հաներ դու զանկեալ անձն իմ խո-
րասոյզ ։

Ի վշտալից մահու կացեալ առ խա հուպ
Բժիշկըդ հոգւոց ,
Փրկեցեր դու զիս յիջելոցն՚ի գուբ :
Սաղմոս ասացէք Տեառըն սուրբք
սրբոխք ,
Եւ յիշատակի
Սրբութեան նորա խոստովան լերուք :
Ի բարկութենէ նորա արհաւիրք ,
Եւ յածայնոց
Պարգեք ՚ի կամաց նորին կենսածիրք :
Ընդ երեկս հանգիստ առնուցուն
լալք ,
Եւ առաւօտուց
Լիցին ցնծութեան բարբառք
բերկրալիք :
Ես ՚ի յօրանալ խմուս՝ ՚ի բարիս

Աստղի ցանձն իմ,
Թէ 'ի յաւիտեան ոչ տեսանիցիս :
Զի դու հանձնեցար 'ի կամբս քոյին
Տալ ինձ զօրութիւն,
Եւ գեղոյ իմոյ ճաճանչ գերարփին.
Այլ դլսայ յանկարծ խաւարեալ ես
անդրէն,
Զի դու տէր 'ի բաց
Զերեսս քոյին դարձուցեր յինէն :
Առ քեզ բոլորով սրտիւ կարդայի,
Եւ առ Աստուած իմ
Ի նուաղել իմում աղաղակեցի.
Զինչ օգուտ է քեզ յարենէ իմմէ,
Եթէ 'ի յերկիր
Ապականութեան անձն իմ իջանէ.
Միթէ հող լիցի առ քեզ խոստովան,

Եւ կամ պատմեսցէ
Ըզճըշմարտութիւն քո զի անկենդան։
Լըւաւ ինձ Աստուած և ողորմեցաւ,
Եւ յուրախութիւն
Ըզսուգ իմ դարձոյց և յանդորր ըզ-
ցաւ։
Ըզտըխուր յինէն եզերծ ՚նաբըզքուրձ,
Եւ ըզցընծութիւն
Փոխանակ սըգոյ ինձ շուրջ ըզգեցոյց։
Որպէս զի սաղմոս քեզ փառք իմ
յաւէտ
Ասասցեն ՚ի սպառ.
Մինչև ՚ի յետին կենցաղոյս ՚ի կէտ.
Եւ մի ևս ինձ զեղջ լիցի յաւիտեան,
Այլ միշտ անդադար
Ա՛ծ իմ առ քեզ լինել խոստովան։

## Յետ հաղորդութեան ․

Երկրպագեմ քեզ տէր Յիսուս, որ
բազմեալ կաս 'ի սրտիս ․
Չեմ բաւական, զի հաճեցար Տէ-
րըդ տերանց գալ առ իս ։
Մեղայ քեզ տէր, և բոլորով զղջ-
ջամ սրտիւ, քաւեա զիս ․
Աւա՜ղ զի զքեզ դառնացուցի գը-
գուեալս 'ի քո երախտիս ։
Յայսմհետէ զքեզ սիրեցից, մի ևս
մեղայց քեզ 'ի սպառ ։
Քոյինդ կարօտ եմ տէր շնորհի,
զաջ քո յօգնել ինձ կարկառ ․

փառք քեզ Ք͞ս, որ զքեզ ետուր
ինձ 'ի խորհուրդս յայս անձառ,
Չունիմ այլ ինչ քեզ ընծայել,
բայց զանձն իմ հեգ և թշուառ։





## ԱՂՕԹՔ

Առ Հայր Երկնաւոր 'ի ձայն Պատարագի։

Քում աներեւութեանդ ամենազօր
Վայելէն փառք, Հայր երկնաւոր.
Այլ ինձ որ հողս եմ մեղք լի,
Տալ քեզ զայն իբր է կարելի,
Թէ ոչ Փրկչին իմոյ ըղձերս
Մատուցանեմ ընդ իմ յաղերս։
Նմին հաղորդ 'ի սեղանիս,
Մարդասէր տէր, ընկալ և զիս։

Տէրն իմ Յիսուս խոնարհեալ աստ
Դընի վասն իմ 'ի ձև Նշխարս :
Եւ ես անարգ հողս աւանիկ
Իջեալ 'ի խորս դառնամ 'ի չիք ,
Եւ հաւատամ Ճըշմարտապէս՝
Կարել նովաւ փառըս տալ քեզ :
Բիւրուց մեղաց եմ պարտապան
Արդարադատ քում տէրութեն .
Եւ Երբ անարգս ես արարած
Քեզ ընդ անհուն Թըշնամանաց
Փոխարինել երբէք կարեմ,
Ի նոյն Թէ ոչ սեղան գիտեմ.
Ուր ընդ պարտեաց իմոց փոխան
Զոհի որդեակդ անպարտական :
Ընկալ մեղաւոյս ըղձս ընդ իմ,
Որ հաստատով խոստովանիմ

Յոյժ քան զոճիրս իմ առաւել
Գոլաւ քեզ փառս հատուցանել:
Ինձ անշնորհիս բիւրապատիկ
Բարեբարիք են երախտիք,
Ընդ որց անրաւ քեզ գոհութեան
Խոստովանիմ գոլ պարտական:
Այլ 'ի սրբուամ 'ի սեղանի
Արեանն' ընդ իմ որ հեղանի'
Շիթ մի յոյժ ծանր է 'ի նժար
Քան զամենայն շնորհաց գումար,
Զոր ուղխօրէն զեղուս 'ի յիս
Եւ զոր բնաւից բաշխես բարիս:
Քումդ կարօտ եմ օգնութեան,
Եւ խնդրելոյ զայն չեմ արժան.
Զի որ զառեալըն վանեցի,
Որո՞վք դիմօք ինձ իշխելի

Լինել դարձեալ քեզ յանդիման
Առանց փրկչին իմոյ արեան ։
Արդ լուր ինձ, տէր, վրէժառելոյ,
Որ այս միակ մնայ ինձ յոյս ․
Եւ զքեզ տալու համարձակիմ
Կոչել ինձ Հայր և Աստուած իմ ։
Հայեաց 'ի զոհ քո Միածնի ,
Զի մի 'ի զուր վասն իմ մատչի ․
Տես զի շրթունքս իմ, որ մաղթեն,
Ներկեալ նորին են յարենէն ․
Գթա յիս, տէր, առ սէր դորա ,
Եւ զկամքս քո յիս կատարեա ։

Առ Տէր Յիսուս [illegible] :

Քեզ գոհութիւն մատուցանեմ և
ըզփառս,
Որ յանպատում հանգչիս ընդ Հօր
քում 'ի կառս.
Որ 'ի չգոյէ ստեղծեալ ածեր զիս
'ի գոյ,
Եւ փրկեցեր 'ի դըժոխոց ա-
րեամբ քոյ.
Որ զիս առ քեզ 'ի տղայ տիոց կո-
չեցեր,
Առ 'ի պաշտել ըզքեզ և կեալ 'ի
քո սէր.
Տուր ինձ 'ի վեր քան զամենայն
գիտութիւն

Ջանամ 'ի միտ ածուլ ըղձեր քո անհուն .
Եւ սիրոյ սէր հատուցանել փոխարէն ,
Յօժար 'ի մահ քան թէ մեկնել առ 'ի քէն :
Ցանկամ առ սէր քոյին , ցորչափ է յիս շունչ ,
Տանել 'ի սպառ վշտակրութեանց անտրտունջ .
Այլ զի յողդողդ եմ ես անզօր և տկար ,
Կարողացո , տէր , դու զհոգիս իմ յօժար .
Վառեա ըղձեր քո 'ի սրտիս , որ եկիր

Ըզհուր սիրոյ քո արկանել 'ի յեր-
կեր :
Տուր ինձ սիրով կըրել ըզխաչս
ամենայն ,
Առ 'ի ստանալ ըզքեզ ըզգանձդ
իմ միայն :
Կորուսանել զհանգիստ ըզփառս
և ըզկեանս ,
Զի զքեզ միայն ժառանգեցից
յաւիտեանս :
Դու միայն դու , տէր իմ Յիսուս ,
լեր ինձ գանձ ,
Կեալ ինձ 'ի քեզ, և մի 'ի սէր մե-
ծութեանց .
Մի երկրաւոր ուսմամբ լինել գե-
րազանց ,

Այլ ուսանել զիմաստութիւն քո
անանց ։
Պահեա զիս, տէր, 'ի գիւտական
փորձութեանց ,
Ուստ ստամբակ խմոց կըրից գընել
սանձ .
Եւ զգայութիւնս իմ թէ հեռաէ
ապըստամբ ,
Տուր նուաճել ինձ զայն քոյով
զօրութեամբ ։
Ամրացո զսիրտ իմ 'ի սնափառ հա_
ճոյից ,
Եւ յերկրաքարշ ըղձից պահեա
զիս ամբիծ .
Թէ ինձ աշխարհ մարմին և դեւ
գըրգեն ռազմ ,

Քե՛ հաւատակ ՚նոյին կացից սըն-
դակայմ։
Շարժեա ըղանիրս իմ, տէր Յիսուս ,
՚ի գորով ,
Անկարեկիր սա ընդ եղբարս իմ
գոլով .
Տո՛ւր ինձ սիրել ըզթըշնամի և զո-
սոխ ,
Եւ մի ՚նդ եղբարս իմ մըթերեալ
պահել ոխ .
Որ առ ՚ի սէր նոցա զարիւն քո
հեղեր ,
Տո՛ւր ինձ առնել գէթ ընդ նոսա
գութ և սէր ։
Կուրացո զմիտս իմ ՚ի պարսաւս այ-
լոց դէտ ,

Տո՛ւր տեսանել զյառութիւնս
իմ եւեթ.
Ուսայց 'ի քէն հեզ և խոնարհ գոլ
սրտիւ,
Զի դու թողես, տէր, զյան-
ցանս իմ անթիւ:
Քաւեա զիս, տէր, զմեղաւորս, որ
առ քեզ
Մաքսաւորին ձայնիւ գոչեմ 'ի
սրտէս:
Նայք եօթնեկին տիրապետեալ մե-
ղաց յիս,
Հարժլէն անդուլ և տատանեն
զհոգիս.
Դու եօթնարփեան շնորհօք Հո-
գւոյդ սրբեա զայն,

Հերքեալ զցիւացն յինէն 'ի բաց
ըզխուժան :
Զեմ արժանի կոչիլ որդի եւ քոյ-
ին ,
Որ անսացի հրապուրանաց բանս_
արկուին .
Ոչ մի անգամ ձեռըն ձըգեալ 'ի
յուղէշ ,
Այլ անձնադանդ եղէ հաստչիդ
միշտ յաւէժ :
Արդ զգենուլ ըզպատմուճանն
իմ 'նախկին ,
Եւ անարատ պահել շնորհօք զայն
քոյին .
Ընդ հովանեաւ ամրածածուկ քո
ձեռին

Պահեա զհոգի իմ և ըզմիտս և զմարմին .
Զի հաստատուն կացից 'ի սէր քո 'ի սպառ ,
Եւ օրհնեցից ըզգըթութիւն քո անճառ :

ԱՌ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ :

Դու փրկութեան աշխարհիս
Ըսկիզբն և դու կատարած .
Որ 'ի հրեղէն կառաց հանգչիս ,
Օրհնեալ Հոգիդ սուրբ ած :
Քեզ օրհնութիւն 'ի բարձունս
Հօր և Որդւոյ հաւասար ,
Վերածնողիդ զիս յերկունս
Աւազանին սրբարար :

Այլ ես, աւա՜ղ, կորուսի
Զցօղեալ ընդ ջրոյն անդ զինև
Ըզցօղ արեանն Յիսուսի,
Եւ ըզշնորհաց քոց պարգև:
Մի՛ վասն իմոց յանցանաց,
Որովք ՚նեխիմըս զազիր,
Գերամաքուր տէրդ ՚ի բաց
Յարարածոյս քո գարշիր:
Խաղաղութիւն դու հոգւոյ,
Դու և մըտացս իմոց լոյս,
Քև զհայր օրհնեմ ընդ Որդւոյ,
Քև ասեմ տէր ըզՅիսուս:
Ի վերնատունն իմ անարգ,
Ուր նոյն բազմի հանապազ,
Ըզգըլըբարար ըզհուրդ արկ,
Որով զխոշհերս իմ բառնաս:

Նա ի՛նքն ըզքեզ փոխան իւր
Մըխիթարիչ իւրոյն եւ ,
Ա՜յլ զուրկ եմ ես և թափուր
Ի սփոփանաց բաժակէդ ։
Եկ էջ հանգիր 'ի սըրտիս ,
Վառեա քոյովդ ըզսա հուրբ ։
Բաց ըզմիտս իմ, ուսո զիս ,
Սրբեա ըզսա Հոգիդ սուրբ ։
Որ զգեցն յերկրէ աղբծալից
Բարձեր 'ի բաց ըզբազգին ,
Ըզկուռս յինէն բարձ զախտից ,
Զոր յիս կանգնեաց թըշնամին ։
Բախեալ մեղաց իբր 'ի ծով
Կոծէն ըզմիտս իմ ալիք .
Հանդարտեցո շնորհիւ քով
Զաղմուկ սորա և մըրրիկ ։

Շարժեա ըզսիրտ իմ 'ի գինջ ,
Տո՛ւր ինձ գարշել 'ի մեղաց ·
Եւ ըղձըղձիմ մըտաց խիղձ
Մերժեա յինէն անդր 'ի բաց ։
Որ բարեխօսդ ես վասն իմ
Ի հեծութիւնս անմռունչ ,
Մի՛ զլա , առ քեզ պաղատիմ ,
Թողուր յետինս իմ 'ի շունչ ։
Դու որ 'ի մուտս իմ յաշխարհ՝
Զիս սրբեցեր 'ի մեղաց ,
Սրբեա , Հոգիդ բարերար ,
Զիս և 'ի յելսն իմ յաստեաց ։
Տեսից ըզլոյսդ եօթնարփեան
Գերափայլեալ անդ 'ի վեր ,
Եւ օրհնեցից յաւիտեան
Զանհատականդ ըզքեզ սէր ։





## ԱՂՕԹՔ

Ի հպէր անուանն Մարիամու ։

Ի յանձկութիւնս իմ և 'ի վիշտ
Զանուն քո ո՜հ կարդացից միշտ ·
Կոյս Մարիամ, Մարիամ կոյս ,
Ինձ յոյս 'ի կեանս և 'ի մահուս ։
Յարուանեկին ծաղկէլ այգուն ,
Ըզքո ըղձիւք կարդամ զանուն ·
Եւ յաստեղաց 'ի լոյս Նըսեմ
Ըզնոյն կարդամ և վերօրհնեմ ։
Ո՛հ Յիսուսին թէ առընթեր

Անուանն 'ի սիրտ իմ քոյդ դրոշմեր՝
Տարրեալ 'ի նմա 'ի քերս անջինջ ,
Ոչ ևս ՚նշմին պակասէր ինչ ։
Կոծեալ խղճի մռայս 'ի ծուփ ,
Ընդորրանամ քեւ հուպ ընդ հուպ ·
Խուժեալ փաղանգք 'ի յիս դիւաց
Ամօթապարտք մերժին 'ի բաց
Յամենազօր ձայն բարբառոյս ,
Կոյս Մարիամ, Մարիամ կոյս ։
Մեղաւորաց դու մայր գոլով,
Եւ ինձ ընդքոյդ ցո՛յց ընդ որով ·
Զի եմ որդի և ես քոյին ,
Զոր երկնեցեր զիս առ խաչին ։
Սիրով բուրեալս ընկեանս իմ ասաց,
Քան թէ 'ի քէն մեկնել 'ի բաց ։
Ըղձեղ 'ի կեանս իմ յարաժամ

Ի շուրթն 'ի սիրտ ունել ցանկամ,
Եւ կարգաւորել զանուն քոյին
Տալ 'ի մահու ըզշունչ յետին ։
Կեցից նովաւ գոհ և անմեղ,
Նովաւ մեռայց գոհ յօրն ահեղ ։

Վասն պայմանի կենաց ընտրութեան ։

Փրկիչ իմ Յիսուս,
Զիմաստութեան քո
Ծագեա յիս ըղձյս,
Ընտրել ինձ ըղձաւ
Որ ուղիղ 'ի կեանս
Ածէ զիս յանմահ.
Եւ տուր 'ի կոչման,
Յոր զնոյն կոչես,
Կալ ինձ անսասան ։

Զի լըցցին յաւէտ
Ցեա յամենայնի
Կամք քո փըրկաւէտ ։

ԱՆՁԻՆ ՆՈՒԻՐԵԼՈՅ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՆՁ
ծննդաւանդեան ։

Մի՛ զմանկութեան մեղս իմ յիշեր ,
Զի անդադար ծանեայ զքեզ տէր ·
Այլ զկամեցողն զուխտս իմ ընկալ ,
Ցոր մինչ 'ի սպառ յօժարեմ կալ ։
Զոր խոստացայն յորն առաջնում ,
Ուխտեմ և այժմ և յանձն առնում.
Հնազանդութիւն բոլորանուէր ,
Զոր մանչու չափ դու յանձն առեր ·
Զուներ բնաւին ինչ սեփական ,

Ըստ չուծոյից գըլխոյդ կայան ·
Գերամաքուր փարուցդ ըղձեր
Ժուժկալութեն կըրթել յաւէտ ։
Երկնաւորիդ Հօր քո հանգոյն
Գոլ կատարեալ ըստ քում խրա-
տուն ·
Օգնեա ինձ, տէր, 'ի կամս յայս իմ,
Որ այժմ ահա ըսկըսանիմ ։

Յորդորակ ։

Ընտրեցի այս ,
Ընտրեցի յաղբ կալ
Ի տան Աստուծոյ,
Քան յոսկեձեղուն
Յարկս ամպարըշտաց
Բնակակցել նոցուն ։

Ո՛րպէս սիրելիք
  Են յարկք քո, Աստուած,
  Որում՝ զնուրն ելիք:
Փափաքէր անձն իմ
  Ի գաւիթս քո.
  Արդ 'ի նմա հանգչիմ:
Սիրտ իմ և հոգի
  Ցնծասցեն առ քեզ,
  Աստուած կենդանի.
Զի եգիտ զիւր տուն
  Տատրակաւ ճնճղուկ
  Եւ տատրակ զիւր բոյն:
Առ սեղան քո, տէր,
  Եւ սուրբ պաշտօնեայք
  Կան միշտ առընթեր:
Երանելիք են

Որ 'ի տան քում աստ
  Ծառայք քո բնակէն.
Յաւիտեանս յաւէտ
  Օրհնեսցեն ըզքեզ,
  Ոչ թէ աստ եւեթ :
Երանեալ է այր
  Ում դու խնամարկես
  Որ որբոց ես հայր :
Ի յողնաթախիծ
  Հովտէ կենցաղոյս
  Ի կենցաղ ամբիծ
Ելս 'ի մահի եդ
  Ի տեղւոջ ուխտիցն
  Ի խաղաղաւէտ :
Ի զօրութենէ
  Նա 'ի զօրութիւն

Քաջարշաւ գնայցէ ,
Մինչև բրաբիոն
Երևիս նըմա ,
Աստուած , 'ի Սիոն ։
Արդ ընկալ զիս , տէր ,
Որ քեզ ընծայիմ
Բոլորանուէր ․
Ի գաւիթըս քո
Լաւ է ինձ մի օր
Քան բիւրք արտաքոյ ։
Ընտրեցի այս ,
Ընտրեցի յաղբ կալ
Ի տան Աստուծոյ ,
Քան յոսկեձեղուն
Յարկս ամպարշտաց
Բնակակցել նոցուն ։

Ըստրուկ և գերի
կեցից 'ի տան քում,
քան թէ տէր երկրի ։
Բեռն է ինձ թեթև
Քաղցըր լուծ քոյին ,
Քան թէ հաւուց թև ։
Իբր 'ի մեհեանդ
Պըճնիմ 'ի շըղթայս
Ցայս սուրբ պարաւանդ ։
Աստ վերջինն արև
Օրհաս ցանկալի
Ծագեսցէ զինև ։
Յերկիր յոր կոխեմ
Ընդ յարկաւ տան քո
Ծածկեսցէ զիս վէմ ։
Դու զողորմութիւն

Եւ զճըշմարտութիւն
Ի սպառ սիրես գուն.
Քո է ձրի պարգեւ՝
Ի շնորհըս քոյին
Մըտաւ յարատեւ.
Եւ 'ի քոց ձըրից
Ոչ մերժես 'ի բաց
Ոյք գըտան անբիծ:
Մ՛ի առներ անտես
Զիս, տէր զօրութեանց,
Զյուսացեալս 'ի քեզ,
Եւ երանեցայց
Այժմ՛ և յաւիտեան
Յառնել քո ինձ այց:

Վասն ծնողաց և ազգականաց ։

Տո՛ւր 'ի շնորհըս քո, ո՛վ Հայրըդ գը-
թած ,
Կեա՛լ ծնողաց իմոց և ազգակա-
նաց .
Ընդ հովանեաւ քո զնոսա ամ-
րացո,
Զերծո 'ի վտանգաց հոգւոյ և
մարմնոյ .
Որպէս զի կեցեալք աստ 'ի մտա-
ւին ,
Եւ անդ 'ի միմեանց կեցցուք ան-
մեկին ,
Ուր ոչ հասանէ մահուն որկո-
րուատ ,

Եւ չէք սիրելեաց երբէք անդ կո-
րուստ .
Զի լեալ ազգակիցք սրբոց ան-
դանոր ,
Օրհնեսցուքըզքեզ յօրհնութիւն
'ի նոր :

ԸՆԴԴԷՄ ԽՈՒԼՈՒԹԵԱՆ :

Աղաչեմըզքեզ, փրկիչ իմ Յիսուս,
Հայեաց 'ի վշտանդ տարակուսե-
լոյս .
Եւ տուր նորաձեւել ինձ զմտաւ
մարմին ,
Այն որ դաշնակից է չար սա-
տանին :

Տո՛ւր ինձ այս ամբիծ և սիրտ ան-
արատ ,
Յարարածըս քո չքնաղ յարատ :
Զօրացո ըղձանս ըղձերքն մար-
դոյս ,
Որ ապաւինիմս 'ի քեզ տէր Յն :

Պատրաստութիւն ասա 'ի ճաշ :

Հաւատամ 'ի քեզ ,
Սիրեմ ըզքեզ , տէր .
Տէր , յոյս իմ դու ես ,
Դու քաւիչ իմ լեր .
Քան 'ի յահաւոր
Պատժոց դըժոխոց ,
Եւ քան 'ի յորդոր
Ընծայա խոստմանց քոյ ,

Առ 'ի սէր քոյին,
Տէր և Աստուած իմ,
Զղջամ ցաւագին,
Ի մեղաց գործիմ:
Ի քեզ, տէր Յիսուս,
Աւանդեմ զհոգիս.
Ի վտանգ մահուս
Մի՛ լքաներ զիս:
Քրիստոսի՛ մայր
Եւ ապաւէն իմ,
Սուրբ Աստուածահայր
Առ քեզ պաղատիմ.
Եւ դու զուարթուն
Իմ ձեռընկալու,
Հասէք յօգնութիւն
Ինձ յայնժամ պահու:

Ըզպատիժ մահուս
Ըստ հրամանի քում,
Վասըն քո, Յիսուս,
Սիրով յանձն առնում։

Առ տէր Յիսուս վասն բարւոք
մեռանելոյ։

Ի ձեռս քո, տէր իմ Յիսուս,
Այժմէն զհոգի իմ աւանդեմ,
Չև ժամանեալ յորհաս մահուս։
Մինչ կարկամեալ ոտք իմ անդամոց
Ձայն երկնաչու ինձ ազդ առնեն
Եւ զմտաւորս ելս 'ի կենաց,
Օգնեա յայնժամ ինձ, տէր Յս՜,
Այժմէն զհոգիս քեզ յանձն առ-
նեմ,

Զի ժամանեալ յորհաս մահուս ։
Մ՚ինչ մըթագնեալ աչք իմ չկարեն
Դառնալ 'ի վերըս քո հայել
Եւ աղերսել ներումն 'ի քէն,
Յայնժամ գըթա յիս, տէր Յս,
Այժմէն զհոգիս քեզ յանձն առ-
նեմ,
Զի ժամանեալ յորհաս մահուս ։
Յորժամ զդողդոջ կարկառեալ աջ,
Ոչ ևս զօրեմ ողջագուրել
Ըզկենարարդ 'ի գիրկս ըզխաչ ։
Օգնեա յայնժամ ինձ, տէր Յս.
Այժմէն զհոգիս քեզ յանձն առ-
նեմ,
Զի ժամանեալ յորհաս մահուս ։
Յորժամ շըրթունքս երփթայեալ,

Ոչ եւ ըղձօ յօդել կարեն
Ի նուագ յետին զանուանդ օրհ-
նեալ,
Յայնժամ խնայեա յիս, տէր Յս̃,
Այժմէն զհոգիս քեզ յանձն առ-
նեմ,
Զի ժամանեալ յորհաս մահուս:
Յորժամ 'ի յունկն իմ ծանրալուր
Ազդի 'ի ձայն իմանալի
Վըճռին անդարձ, թէ ե՛րթ 'ի
հուր,
Օգնեա յայնժամ ինձ, տէր Յս̃,
Եւ զօրացո ըղձըհաւատալս
Յերանաւէտ ձայնիդ 'ի լոյս:
Մինչ տագնապի սիրտ իմ ահիւ,
կծեալ խըղճի մըտացս 'ի ծուփ

Վասըն մեղացս իմոց անթիւ ,
Յայնժամ խնայեա յիս , տէր Յս ,
Հաս յօգնութիւն , և արծարծեա
Զողորմութեան քո յիս ըղյոյս :
Թէ յարհաւրաց անտի մահուն
Եւ 'ի ցաւոց սրտի իմ ընկճեալ ,
Ոչ զօրէ տալ քեզ գոհութիւն ,
Օգնեա յայնժամ ինձ , տէր Յս ,
Որ այժմէն յանձն առնում սիրով
Զա̃ծասաստ վըճիռ մահուս :
Մինչ քաւութիւն մաղթեն յերկ-
նից
Գունդ սիրելեաց ինձ և եղբարց
Շուրջ պար առեալ յօգնաթա-
խիծ ,
Ընկալ , տէր , զհոգիս իմ ընդ նոցայն ,

Որ զիս այժմէն քեզ յա՛նձն առ-
նեմ,
Մինչև 'ի ժամն հասանալ իմ յայն ։
Մինչ անըզգայ անկեալ դընիմ,
Եւ տխեղերք առ հասարակ
Այնուհետև չիցեն վասն իմ,
Օգնեա յայնժամ ինձ , տէր Յս̃ ,
Որ դու միայն ընդ իս 'ի սպառ
Կաս անմեկնին 'ի ժամ մահուս ։
Ընկալ զվերջին զիմ հեծութիւն
Իբր հառաչանս առ քեզ գալըս
Առ 'ի սաստանալ ըզգանձգ անհուն .
Եւ ըզմարմնոյս լուծումն 'ի հող
Ի կամաւոր քեզ պատարագ
Մինչև յետին հարկանի փող ։
Եւ մինչ հոգի իմ յանդիման

Կացցէ բեմիդ, և առ 'ի քէն
Հանդիպեսցի ողորմութեան,
Հասեալ 'ի կեանս անդ անվախճան,
Զքեզ սիրեսցեն, և օրհնեսցեն
Զողորմութիւն քո յաւիտեան:

Առ հրեշտակս և հրեշտակապետս:

Յօգնութիւն հասէք ինձ գունդք անմահից,
Մըշտայաղթք ընդդէմ դիւացըն հինից.
Միքայէլ, իմանալեացն էից ծայր,
Որ ըզվէճն արկեր 'ի վիհ, բելիար:
Ի յելիցն իմ զիս յառաջեացս 'ի պահուն
Ի ժանեաց նորին զերծո անդնդկուն:

Գաբրիէլ որ զփրկութեան աշխար-
հիս
Նախասկիզբն ածեր կուսին զաւե-
տիս,
Բարեխօս մեղուցելոյս լեր առ տէր,
Մի՛ անտես ըզգինս արեանն իւր առ-
նել.
Եւ ըզփողն յորժամ հընչես ահար-
կու,
Արդարոցն զիս զարթո ընդ դասու։
Ռահահորդ ինձ յերկնաչու լեր ու-
ղին,
Ռափայէլ, իբր յանձն 'ի քեզ որդե-
կին։
Եւ որ կաս ինձ հանապազ առըն-
թեր,

Նոյն յերկնից գալով ՚ի կայս գեր ՚ի
    վեր ,
Պահապանդ հոգւոյս հրեշտակ գու-
    խմբոյս ,
Մի տացես յապաշնորհես յինէն
    խոյս :
Սերովբէք և բազմաչեայ քերովբէք ,
Եւ վասն իմ զտէրն ողորմած մաղ-
    թեցէք ·
Ողորմեա , զի դու և զդա հաստեցեր ,
Ի կորուստ մի զգործ ձեռին քո մատ-
    ներ :



## ԱՂՕԹՔ

Առ սուրբ հրեշտակն պահապան ։

Ո՛վ սուրբ հրեշտակ իմ պահապան,
Ինձ որ խնամոց քոց չեմ արժան,
Այլ 'ի սրտէ առ քեզ կարդամ,
Լեր ապաւէն յամենայն ժամ ։
Ի վտանգաց զիս բիւրաւոր
Դու կեցուցեր մինչև ցայսօր .
Մի զիս , մաղթեմ , և յայսմ աւուր
Ի ձեռանէ քումմէ թողուր ։

Յորոգայթից փրկեա չարին
Զիս՝ որ յաճախ անսամ՛ ՚նըմին.
Եւ մի՛ մեկնիր յանարժանէս,
Որ յանձն առնեմ զանձն իմ ՚ի քեզ։

Առ սուրբ Նախահարսն։

Երանելի Նահապետք,
Որ ՛Քնի տեսոյն գոլով անձկաւէտք,
Ըղձիւ յուսով սիրեցիք
Ո՛վ բարեկամք նորին և սերտ սիրելիք։
Հայրդ հաւատոյ Աբրահամ,
Սահակ, Յակոբ, և Նախահայրդ իմ
Ադամ,
Ինձ բարեխօս միշտ առ տէր
Լերուք ընդ հարս համայն յերկինս
անդր ՚ի վեր,

Որքա՜ն զատեղըս դուք արդ
Եւ քա՜ն զարփին լուսածագէք գե-
րագարդ ,
Որպէս պանդուխտ և նըժդեհ
Կեալ ինձ յերկրի՝ բերեալ ըղձակ
ձեր յիս վեհ ,
Եւ հառաչել հանապազ
Ի հայրենիս անդր 'ի յեղեցն իմ օր-
հաս .
Զի որ չեղէ արժանի
ԶՅիսուս փրկչին իմ տեսանել յաշ-
խարհի ,
Տեսից ըզնա անդր ընդ ձեզ ,
Եւ զմայլեցայց յերանաւէտն իւր 'ի
տես :

Առ տուրք Կարապետին:

Որ 'նըստելոց 'ի մըթան
  Եւ ոյց 'ի ստուերըս մահու
  Կէին 'ի խիստ գերութեան,
Ծագեցեր լոյս աննըսեմ,
  Ընդ Ճանապարհ երկնաչու
  Ուղղեալ զնոցին ոտս 'ի Ճեմ.
Յիս որ անկեալ վերըստին
  Դըժնիմ 'ի նոյն 'ի խաւար,
  Մեղօք մածեալ մըթագին,
Շողեա զնըշոյլ քո անդրէն
  Ո՛վ արուսեակըդ պայծառ
  Արփւոյն ծագմանն 'ի կուսէն:
Կացո զգընացս իմ ոտին

Ի Ճանապարհն արահետ,
Մի խոտորիլ յարտուղին.
Զի յերկնայինն օթեան
Լուսաշաւիղ ընդ քո հետ
Հասեալ կեցիս յաւիտեան։

Ա— ———րի Ա———————————յրն։

Ի մահահրաւէր
Ժամուն 'ի վտանգ
Կայց ինձ առընթեր,
Նա լեր ձեռընտու,
Սուրբ աստուածահայր,
Ինձ յայնըմ պահու։
Յիշեա զի յայնժամ
Քեզ ընդ Յիսուսի

Մե՛րձ կայր Մարիամ.
Տո՛ւր ինձ ըղձոցին
Կարգալով զանուն
Տալ ըղջունչ յետին։
Որում մարգարէք
Եւ արդարք 'ի տես
Եղեն անձկաբեկ,
Դու յաստուածընկալ
Գիրկըս քո ըղձա
Գըգուեցեր բարձեալ։
Սիրով որդեակս
Եղև հայրակոչ
Աստուածորդին քեզ,
Հնազանդեալ ընդ քև
Ում արբանեկէն
Լուսին և արև.

Որով կայն երկիր,
Եւ էրս համօրէն
Ի սմա պարագիր․
Զոր պաշտէ երկին,
Եւ հոյլք սրովբէից
Ի նմանէ սարսին։
Դու կերակրողին
Ձագուց ագռաւուց
Որ առ 'նա ճըռին՝
Ետուր կերակուր,
Եւ ըղձեաս ում ես
'Նոցին ըղձիւտուր։
Բարեխօս առ տէր,
Սուրբ աստուածահայր,
Մեղուցելոյս լեր․
Չէ և չէ իսկ մարթ

Թէ աղերս քոյին
Լսցի տարապարտ:
Դու ինձ ապաւէն
Լսցես անդ, և քեւ
Ջերմայց 'ի գթւէն.
Յիսուս Մարիամ
Լսցին ինձ ընդ քեզ
Յոյս միակ յայնժամ:

Առ սուրբ Նախավկայն:

Յիսուսի փրկչին
Ո՛վ սուրբ Ստեփանոս
Վըկայդ առաջին,
Սանդուղք լուսափայլ
Յերկրէ 'ի յերկին
Բարամնիք քեզ կազմեալ.

Դու նախկին զեթեր ,
Զոր փափկեաց Ադամ ,
Աղօթիւք բացեր .
Եւ ընդ աջմէ Հօր
ԶՈրդին միածին
Ցեսեր անդամոր :
Որ ըզբազմութիւն
Քարանց ծաղկաբար
Ըզներկեալս յարիւն
Ի բոսորաբուղխ ,
Ածեր ընդ փշոց
Քեզ պսակ ՚ի գլուխ .
Եւ զարիւն քոյին
Մարտիրոսական
Խառնեալ ընդ փրկչին
Կենարար արեան ,

փոխեցար յերկրէ
Ի կեանս անվախճան ։
Արդ որ անօրէն
Քոյ քարաձգողաց
Ներել փոխարէն
Յերկնից մաղթէիր ,
Տէր , մի զայս 'ի մեղս
Սոցա համարիր ,
Առ նոյն ինքըն տէր
Բարեխօս վասն իմ
Մեղուցելոյս լեր ,
Որ լամ բոլորով
Զղջացեալ սրտիւ
Ընդ մեղս իմ յոլով ։

### Առ տոպէ Ատտէնս։

Որք բարձեալ ըզխաչ ըզհետ փըր-
կողին ,
Հարիք առաւօթուր
Ջաչխարհի հրապոյր ,
Առաքեալք նորին ,
Տուք ինձ հրաժարել 'ի բաց յաշխար-
հէս ,
Եւ առնել 'ի յախտից
Կրքին խաչակից
Մահանալ ընդ ձեզ։
Որք ըզգեցն յերկրէ բարձէք ըզխա-
ւար ,
Ըզլոյս համափիւռ.

Ծագեալ ընդ հանուր
Արփւոյն 'ի տխալար ,
Ի տուներըս մնայց կործան անկե-
լոյս
Տուք կանգնել 'ի Ճեմ
Յուղին աննըսեմ,
Եւ գնալ ինձ 'ի լոյս :
Մինչ յատեանն ահեղ բազմիք դա-
տաւոր ,
Դատել ընդ Նըմին
Զազգինս երկրածին
Ի յետնումն աւուր ,
Մի լքցի ինձ անդ ընդ Թըշուառ և
հեք
Հեստողացն ընդ ջոկ
Ըզգաստան անողոք

Լըսել ահարեկ.
Այլ զերանաւէտ փըրկչին ըզբար-
բառ.
Արդարոյն ընդ հոյլ,
Եւ օրհնել անդուլ
Ըզտէրն իմ 'ի սպառ :

Ա— ———րէ Լ———————րէն :

Ո՛վ երջանիկ տէր սուրբ Գրիգոր,
Որ բազմամլեցս երկամբ ծընար
Յորդեգրութեան զիս հոգեար,
Եւ զհաւատոյ ծագեցեր լոյս
Չարչարանօք քո և Ձրդամբք
Կռամեաստուեր խաւարելոյս,
Տո՛ւր 'ի հաւատս այս ինձ 'ի սպառ.

Կալ հաստատուն, և դաւանել
Զայն աներկիւղ և անպատկառ.
Հեղուլ զարիւն խմբոստագիւր,
Եւ մի երբէք ինձ անկանել
Ի հաւատոյ աստի սուրբիւր:
Կեցից 'ի ծոց իւր ամրապահ
Յորդայթից հրապուրողին,
Եւ կալով 'ի նմա դլրցէ զիս մահ:

Առ սուրբ հայրապետն Մծբնայ:

Մաղթեա 'ի տեառնէ, ո՛ հայր բարե-
խնամ,
Բառնալ առ 'ի մէնջ ըզմահ տա-
րաժամ,
Եւ տալ մեզ պատրաստ 'ի խա-
ղաղաւէտ

Ելից կենցաղոյս ժամանել 'ի կէտ։
Ո՛վ հայր բարեգութ, լեր մեզ ա-
պաւէն
Եւ 'ի ժանտագոյն հոգւոց մա-
հուանէն.
Զի կեցեալք հոգւով 'ի կեանս
յայս 'ի սպառ,
Կեցցուք երկոքումբք 'ի կենցաղն
անճառ։

Առ սուրբն Ներսէս Պարթեւն։

Հայրապետ ամբիծ,
Որ երանաւէտ
Ի խորանս երկնից
Պայծառ քան զարեւ

Արփուես Ճառագայթ ,
Հայեաց 'ի սարսն .
Տե՛ս , հայր բարեխնամ ,
Ըղձայրավառին
Խաչանց քոց զերամ ,
Զորս ընդ ծաղկաւէտ
Երբեմն ընդ արօտ
Ածէիր ըղձէտ :
Դարձո ըզնոսա
Ի փարախն անդրէն
Ի կաթողիկեայ ,
Եւ զմեզ ամրացո
Յոր թողերն 'ի ծոց
Սուրբ եկեղեցւոյ :
Պաղատիմք առ քեզ
Ա՛ռ հայրդ գըթած

Դիմեալք որդեակս,
Հովուեա զմեզ յաւէտ
Եւ յերկնից այտի
Ո՛վ սուրբ Հայրապետ։

Առ սուրբն Աստուածածին։

Դու նախասկիզբըն միանձանց,
Դու հրեշտակաց ուրախութիւն,
Եկեղեցւոյ փառք գերապանծ.
Որ ծննդութեան քո ընդ հանդէս
Զարմանային զօրք երկնային
Անընկառոյց եղեալ ՚ի քեզ.
Զի ՚ի մարմնի դու կառուցեալ,
Եւ զանմարմնոցըն բերէիր
Յանձին ըղձալըղս սրբափայլ.

Բարեխօսեա՛ վասն իմ առ տէր
Հայցմամբ ամբիծ Թեւոցդ՝ որ միշտ
Ամբառնայլին աղօթանուէր ։
Տո՛ւր ընդ անձուկն ինձ արահետ ,
Ընդ որ եղեր դու նախընթաց ,
Գը՛նալ փըրկչին խմում ըղձեա ։
Զի արժանի եղէց ըղձայն
Նորին լըսել զերանաւէտ ,
Եւ ժառանգել զկեանս անվախ-
ճան ։

Առ սուրբն Նիկողայոս ։

Ով 'ի զգալի ալեաց 'ի ծուփ
Կարդամ աւքեղ լինել ինձ հուպ,
Այլ յալեկոծ մըրրիկ հոգւոյս
Հաս յօգնութիւն վըտանգելոյս ,

Ո՜վ երկնայնոցն յերկրի հանգէտ,
Նիկողայէ սուրբ հայրապետ:
Սատանա չարին մրրրկայոյզ,
Եւ ընդ նենգող ծով կենցաղոյս
Ձերծ 'ի հինից աներեւոյթ
Տուր ինձ ընդ քեզ նաւել անքոյթ:

Առ սուրբ Ոսկեբերանն :

Որ քառավտակ
Աղբերն Եդեմայ
Բղխեալ հանգունակ,
Ի յուղս փրկաւէտ
Արբուցեր զաշխարհ,
Ո՜վ սուրբ հայրապետ.
Արբո զանձրդիս,
Արդիւնքս բարեաց

Բերկրելով 'ի յեռ ·
Եւ բուսս բողբոջս
Առաքինութեան
Ցխնուան 'ի հոգւոջ ·
Զի ըղձեւ քոյին
Ընդ լուսաշաւիղ
Հետեւեալ ուղին ,
Եղէց մասնակից
Քեզ յերանաւէտ
Օթեւանս երկնից ,
Ուր յանձնառելին
Բնակես դու 'ի լոյս
Հուպ յերրեակն և մին :
Մաղթեա փըրկողին
Թողութիւն մեղաց
Ծնողաց քոյին :

Առ տիրուհին Մագդաղենացին ։

Որ ըղձարունեայ քո գլխարգապետին
Ըզգերամաքուր ոտոցն Թանալով
Ի սիրայորդոր արտասուաքոյին ,
Ջընջէիր գըլխոյդ ըղձոմն հերով,
Վարդապետուհիդ ապաշխարու-Թեան ,
Խընդրեա 'ի Նմանէ ինձ մեղուցելոյս
Քոյումդ հետևել Ճըշմարիտ զըղջման ,
Եւ մինչև 'ի սպառ սիրել ըզՅիսուս ։
Եւ որ տէրունեան մարմնոյն 'ի Նըւէր

Վաղ ընդ արշալոյս միաշաբաթին
Խընկով անուշիւք եղեր իւղաբեր
Ընդ ծծաւէր քորոդ 'ի միասին ,
Հայցեա 'ի Նմանէ սուրբ մագդա-
ղէնի ,
Զի և ես նըմին գոլով մահակից ,
Եղէց յարութեան նորին արժանի
Ի յերանաւէտ օթևանս երկնից ։

[illegible] ։

Որ 'ի հարսանիսն ծծահրաւէր ,
Ո՛վ գերահանճար կոյսըդ հարս-
նաւէր ,
Նշէր ընդ առաջ անմահ փեսայ-
ին ,

Անաղօտ բարձեալ լապտեր 'ի ձե_
ռին ,
Եւ յարփիձաներկ 'ի ձորձ կար_
մրափայլ ,
Յաղթական 'ի գլուխ պսակ բո_
լորեալ ,
Ի յեօթնաստեղեայն լուսեղէն
կամար
Ընդ վըկայուհեաց բազմիս ընդ-
գումար ,
Աղաչեմ ըզքեզ , ո՛վ սուրբ օրի_
որդ ,
Ի նոյն 'ի հաւատս ինձ լեր ռա_
հահորդ .
Եւ տո՛ւր ընդ առաջ տեառն ընդ-
ամպս երկնից

Ընդ հոյլս արդարոց դիմել դա-
սակից :
Եւ 'ի յերկնի անդր, ո՛վ սուրբ
Հռիփսիմէ,
Զաչըս քո դարձո գըթածս 'ի
յերկնէ,
Ուր ըղձարդագոյն զարիւն քո հե-
ղեր.
Մի զաւազելին զայն անտես առ-
ներ :

Այս տաղէ վարդապետին Գէորգայ :

Որ 'ի յերկրաւոր
Զինուորութենէ
Լեալ երկնից զինուոր,
Սուրբ Գէորգիէ,

Եւ ստորանկելոց
Ի տեղի զօրաց
Պայծառ քան ըղբոց
Փայլես աստեղաց ,
Ըզքեզ աղաչեմ ,
Ի մօրան աչարկու
Օգնեա ինձ ընդդէմ
Դիւային դասու :
Դու որ առ 'ի սէր
Փրկչին մրտագիւր
Մատուցեալ 'ի Նուէր
Զարիւն քո եռուր ,
Տուր ինձ հաստատուն
Կալ 'ի հաւատս անդ ,
Դաւանել ըզնոյն
Հոգւոյս իմ ցաւանդ :





# ԱՂՕԹՔ

## Ի ՍԱՂՄՈՍԱՑ

### Սաղմոս Ա.

Երանեալ այր որ ոչ գընաց
Ի ճանապարհս ամպարըշտաց.
Չեղև չարին նա ուղեկից,
Եւ ոչ յաթոռ նըստաւ ժանտից:
Այլ 'ի հրամանս Տեառն
Հաճ են և գոհ միտք և կամք իւր.
Եւ ըղձիչէր և զտիւն 'ի բուն

Խորհի անդուլ յորէնս ՚ի նոյն ։
Զի որպէս ծառ նորաբողբոջ
Տընկեալ զառուփն ջուրցն ՚ի խո-
խոջ ,
Տայցէ նա զմիրգ իւր ՚ի ժամու ,
Մըշտադալարթ այըտ՚նէ՜ զարդու .
Եւ զամենայն գործըս նորա
Յաջողեսցէն երկինք նմա ։
Ոչ այսպէս ոչ է ամպարիշտ ,
Այլ երերեալ ՚ի յերկրի միշտ .
Որպէս փոշի զի հողմավար
Այր անդր հոսեալ հալածի յար.
Վասն այսորիկ ՚ի յահաւոր
Դատաստանին մեծի աւուր
Մի յարիցէ զըւարթերես
Ընդ արդարոց չարն ընդ հանդէս.

Զի տէր ծանեաւ զարդարոյն ուղի.
Չարացն ուղիք անցեն 'ի մահ:

## Սաղմոս Բ.

Զի՞ խռովեցան ազգք, և ընդէր 'ի
խորհուրդ
Գումարեցան 'ի միասին ժողո_
վուրդք.
Եւ պետք երկրի ճակատեցան տա_
րապարտ,
Տալ ընդդէմ տեառն և օծելոյ նորին
մարտ:
Բամ խզեսցուք զնոցա կապանսըն
դըժնեայ,
Եւ ընկեսցուք 'ի մէնջ ըզլուծն 'ի
բացեայ:

Այլ ծնծաղս բնակեալն յերկինս ըղ-
'նդօքք ,
Արհամարհեալ զաստուածամարտ
'նոյին ջոկ ,
Եւ 'ի խօսել անդ՝ բարկութեամբն
խակ խռով
Արկանէ բուռն 'ի 'նոսա ահ և խը-
ռով :
Ես 'ի Սիոն լեառըն կացի Թագաւոր,
Ի լեառըն սուրբ իւր 'նա 'նըստոյց
զիս յաԹոռ ,
Լինել քարոզ և վճէժ խըղճգիր օրինաց,
Պատմել հանուրց ըզպատուիրանս
իւր ազգաց :
Դու ես որդի իմ՛, տէր ասաց ցիս ,
դու ես .

Եւ ես այսօր 'ի յարգանդէ ծընայ
զքեզ:
Խընդրեա՛ յինէն և տաց քեզ զազգս
'ի ստացուած ,
Եւ ծագք երկրի լիցին քեզ ծագք
սահմանաց .
Հովուել զնոսա գաւազանաւ եր-
կաթի ,
Եւ խորտակել որպէս զանօթ ինչ
բըրտի :
Զայս , Թագաւորք , 'ի միտ առէք
արդ պատգամ.
Եւ դուք դատիք զերկիր , խըրատ
զայս ձեզ տամ:
Ծառայեցէք տեառն երկիւղիւ հա-
նապազ ,

Զբուարճախառըն գողութեամբ կայ
'ի պատս :
Հայրագորով լերուք խրատուն իւր
հնազանդք ,
Զի մի՛ ցասման նորին ըղձեօք անկ-
ցին շանթք .
Եւ ցրուեսջիք հալածականք ընդ-
երկիր ,
Յարգարութեան Ճանապարհէն տա-
րագիր :
Ո՜հ , երանի՜ ոյք յուսացեալ են 'ի
տէր ,
Ի բորբոքել ցասման նորա ընդդէմ
ձեր :

### Սաղմոս Գ.

Տէր զի՞ բազում եղեն ընդդէմ ինձ
ոսոխք,
Եւ 'ի վերայ իմ յարեան հոյլք բազ-
մամբոխք.
Ոյք ասէին զինէն 'ի շուրթն ան-
համբոյր,
Չիք փրկութիւն սորա առ տէր
Աստուած իւր։
Այլ դու, տէր, դու ինձ օգնական և
նեցուկ,
Բարձրացուցիչ գլխոյ իմոյ ես և
շուք։
Զայնիւ իմով ես առ Աստուած կար-
դացի,

Եւ տէր լըւաւ ինձ 'ի լեռանէ Սիոնի :
Ես 'նընջեցի յանդորր 'ի քուն և
զարթեայ ,
Զի ընդունող իմ չէր յինէն 'ի բա-
ցեայ :
Ոչ 'ի զօրաց 'նոցա երկեայց ես բիւ-
րոց ,
Որ շուրջ զինև պաշարէին բազմա-
հոծ :
Արի փրկեա զիս 'ի ձեռաց 'նոցա ,
տէր ,
Զի դու զնոսա զամենեսեան իսկ
հարեր ,
Որ դըրդռէին տարապարտուց մարտ
ընդ իս ,
Եւ փըշրեցեր զանիրաւաց ըզժանիս :

Քո է փրկել. և աջ քոյին փրկա-
ւէտ
Հովանասցի ժողովրդեան քում յա-
ւէտ:

## Սաղմոս Դ.

Ի կարդալ իմում լուար ինձ ած
Ըստ արդարութեան զիմ առ քեզ
հայցուած.
Ինձ 'ի նեղութեան անդորր արարեր.
Լո՛ւր ինձ գթութեամբ, ողորմեա
ինձ տէր:
Ցե՞րբ որդիք մարդկան, մի՞նչև ցե՞րբ
անգութ,
Սիրէք զնանրութիւն և խնդրէք
ըզսուտ.

Ծաներուք զի հրաշս ահա անպա-
тում

Արար ինձ բարձրեալն ընտրելոյ իւ-
րում.

Եւ ոչ փակեաց նա զունկն իւր առ-
իս ,

Ի կարդալ իմում առ նա ՚ի կարիս :

Բարկանայք ընդ իս, այլ մի մեղան-
չէք .

Լիջիք յանկողինս ձեր սրտատրեկ ,

Հարեալք յապաշաւ ՚ի դառնակս-
կիծ ,

Յոր ինչ ասիցէք ՚ի խորըս սրտից :

Մատուցէք նըմա զոհս արդարու-
թեան ,

Եւ ՚ի նա յուսով լերուք ապաստան:

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ
Ըզխոստմանց նորին արդեամբք ըղ-
հանդէս.
Այլ դու խընդութիւն ՚ի սիրտ մեր
եդուր,
Զերեսաց քոց լոյս ծագեալ ընդ
հանուր:
Զեղուն ՚նչ անդք ՚ի ցորեան առաք,
Զիթենիք ՚ի միրգ, և հընձանք գի-
նեօք:
՚Նընջեսցուք յանդորր աներկիւղք ՚ի
քուն,
Զարթիցուք անդորր ՚ի յայամ և ՚ի
սոյն.
Զի դու, տէր, միայն բարեայդ ՚ի
վայրել.

Նատուր մեզ յերկրի յուսովքս բնա-
կել :

## Սաղմոս ՃԼԲ :

Ո՛հ զի՛ բարի, զի՛ վայելուչ,
Բնակել եղբարց ՚ի միասին համա-
շունչ :
Որպէս ՚ի գլուխն Ահարոնի
Եւ ՚ի մօրուսն իւղն որ իջեալ զեղա-
նի՛ ,
Եւ ՚ի մօրուաց անտի նորուն
Մինչ ՚ի գրապանս անդր իջանէ ՚ի
զգեստուն .
Կամ որպէս ցօղ քաղցրածաւալ
Ի Հերմոնէ ՚ի Սիոն լեառն ցօղեալ :

Ընդ պատրաստեաց տէր զօրհնու-
թիւն ,
Ի նմա ըղձեանս յաւէժ անմահ մը-
նայուն :

Ի սաղմոսն ՃԼԶ երգ շարականին :

Զքեզ առ գետովք Բաբելոնի նըս-
տեալ ողբամ զառն 'ի կոծ ,
Սիոն գաւառ իմ հայրենի, ո՜վ լոյս
աչաց դու իմոց ·
Տըղմուտ պղտորույ և եղեգանց բնա-
կեմ 'ի մէջ անտէրունչ ,
Եղերերգեն ինձ կոծակից ըզքեզ ա-
լիքն 'ի շըշունջ :
Ցե՛րբ 'ի շըղթայս յայս ժանգահար
ընդ անծանօթ աստեղք

Ջուր կարգայցեմ, և վայրապար ար-
կից արտոյտ և բողբ :
Ընդ ուռենեայն կարկառուն ան-
պատըսպար հովանեաւ
Շըղթայալինդ անկեալ զընին
բարձք գեղապաղք 'ի կաքաւ .
Յարտասուաթոր սաղս կընճնեաց
կըտակարանք մեր 'ի կախ ,
Փողք և սուլիչք քնարաց ոսկի լը-
ռեցին թելք աղաւաղ .
Եւ երթևեկք տարեկանաց իբր ա-
ներջոց անցին յոյզք ,
Հող ըղձըլխով, քուրձ 'ի մարմնի ,
աչք կըւաղին յարտասուս :
Ցե՞րբ 'ի շըղթայս յայս ժանդահար
ընդ անծանօթ տառեղք

Ջուր կարդայցեմ, և վայրապար ար-
կեց արտօսր և բողոք ։
Գերեվարք մեր խաղան ըղձեօք մեր
մեղանաց փոխարէն ,
Եւ զօրհներգու ածեալ գործիս բըռ-
նի 'ի բուռըն մըղեն .
Երգեցէք մեզ ասէ՝ լուեցուք յօրհ-
նութենէն Սիոնի ։
Այլ 'ի տըխուր տաճեալ ձեռաց քը-
նարն 'ի սոսր անկանի .
Յերկիր օտար երբ հընչեցեն աս-
տուածանուէր երգարանք ,
Ուր այլազգի լերինք և բլուրք կըրկ-
նեն անսուրբ արձագանգք ։
Յերբ 'ի շըղթայս յայս ժանգահար
ընդ անծանօթ աստեղջք

Զուր կարդայցեմ, և վայրապար ար-
    կից արտօսր և բողոք։
Կողերց ծառոց հիւրք անկայուն 'ի
    բերկրաձայն դայլայլիկ,
Զարտասուահոս աչաց իմոց, ա՛հ, ոչ
    սրբեն Ճապաղիք։
Մինչ չև առ դրունս քո հասեալ
    կացցեն իմ ոտք գերեդարձ,
Թէ յուղեսցին այերք 'ի ձայն յիա-
    բայելեան նուագաց,
Կամ 'ի սրբոյս քաղաքըդ սուրբ թէ
    յիշատակ քո խլեսցի,
Քիմք 'ի լեզուս իմ կցեսցին, աջ
    իմ յինէն թողասցի։
Ցե՜րբ 'ի շղթայս յայս ժանդահար
    ընդ անծանօթ աստեղօք

Զուր կարգայցեմ, և վայրապար ար֊
կից արտօսր և բողոք։
Տէր դատաւոր խրատակիչ վարձա֊
հատոյց մահացուաց,
Իշխող ծովուն մերթ լեռնաձև մերթ
դաշտաձև կոհակաց.
Եթէ կացցե՞ն մեզ լեռնացեալ, և
երբէք ո՛չ դաշտանան
Մեր մեղանաց խնկնայորդոր գահիժք
զուակն եգոմեան.
Ոյք գոչէին, քակեցէք զայդ, տա֊
պալեցէք անխնայ,
Զատուածաշէն հիմն 'ի յատակս
աւերեցէք Սաղիմայ։
Յե՛րբ 'ի շղթայս յայս ժանգահար
ընդ անծանօթ ատեղօք

Զուր կարդայցեմ, և վայրապար ար-
կից արտօսր և բողոք ։
Ո՛վ դուստըր ժանտ բաբելացւոց ,
Իսրայելին գերեվար ,
Երանի՜ ում քոյ չարեաց տացէ 'ի
ծոցդ ըզվըճար .
Լըցցի բարեօք այն ոխերիմ, որ յան-
դիման քոյ աչաց
Կալեալ զոտից մանկանց քոյին՝ հար-
ցէ ուժգին ըզքարանց ,
Մինչ 'ի բարձանց ձեռն որ ըզմեզ
միշտ ապտակէ հայրաբար ,
Անկցի զըգլխով քո վրէժխընդիր և
քոյ չարեաց պատժարար ։
Յերբ 'ի շըղթայս յայս ժանդահար
ընդ անծանօթ աստեղօք

Զուր կարդայցեմ, և վայրապար ար-
կեց արտօսր և բողոք :

Օրհնութիւն Ծննդեան Սիմոնի :

Արդ այսուհետև արձակեա զիս, տէր,
Ի խաղաղութիւն ,
Զի տեսին աչք իմ զոր պատրաս-
տեցեր
Ազգաց փրկութիւն :
Իսրայէլի ընտրելոյ քում
Պարգևեալ փառս անպատում ,
Նաև ՚նստելոց ՚ի մութ ՚նսեմ
Գըտնալ ազանց լուսաճեմ:

## Գոհաբանութիւն 'ի վերջ տարւոյ։

Դու, տէր, դու զայս ամ
 Ի լրումն հասուցեր,
 Ըզքէն գոհանամ
 Աստուած իմ և տէր։
Քև էից համայն
 Պահպանին տեսակք,
 Տարւոյ քաղցրութեան
 Քև օրհնի պսակ։
Այլ Նոցին չէատուր
 Ճանաչել ըզքեզ,
 Իսկ յինէն արխատուր
 Միայն սէր խընդրես։

Չքնա՛ղ և վսեմ
Եւ ձրի տուրևառ .
Ըզքեզ տէր օրհնեմ
Այժմ և մինչ 'ի սպառ :







# ՃԱՆԱՊԱՐՀ

## Սրբոյ Խաչին.

Եկեալքս յերկրպագութիւն չարչարանաց տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, խոստովան լիցուք զմեղս մեր 'ի բոլոր սրտէ զղջանալով։

### Աղօթք.

Մեղայ քեզ մեղայ,
Ո՛ հայր բազմագութ, ըզմեղս իմ
քաւեա։

Զղջամ տէր զղջամ
Զի դառնացուցի զքեզ բազում
անգամ ։
Չեմ իսկ արժանի
Որդի անուանել սիրոյդ հայրենի ․
Ո՜ հայր բարեխնամ,
Ընկալ զիս ընկալ որ առ քեզ դառ-
նամ ․
Դասեցո՛ 'ի կարգ
Վարձկանաց քոց զիս իբր ըստրուկ
անարգ ։
Ինձ այսուհետև
Լաւ իցէ մի ևս տեսանել զարև ,
Քան ընդդէմ սիրոյդ
Մեղանչել երբէք , ո՜ հայր բարե-
գութ ։

### ՀԱՆԳԻՍՏ ԱՌԱՋԻՆ

### Յիսուս դատապարտի 'ի մահ։

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհնեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհ։

Փրկիչ իմ Յիսուս, որ անպարտականդ ընդ պարտաւորիս դատապարտեցար 'ի մահ, իմ իսկ զվճիռ մահուդ բազմութեամբ յանցանաց իմոց հաստատելով․ փրկեա զիս 'ի յաւիտենից մահուանէն՝ որում գըտանիմս պարտաւոր։

Հայր մեր։ Ողջոյն։

Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ։

Առ քեզ պաղատիմ, փրկիչ իմ և տէր,
Որ վասն իմ անպարտ յատենի կացեր,
Եւ անբաւելիդ Աստուած որպէս մարդ
Ի Պիղատոսէ եղեր դատապարտ.
Տուր ինձ 'ի մեղաց 'ի բաց կալ 'ի սպառ,
Որովք ես գոյին եղէ քեզ պատճառ:

## ՀԱՆԳԻՍՏ ԵՐԿՐՈՐԴ

Յիսուս բառնայ յուսին զխաչն իւրն:

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհնեմք զքեզ:

Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր
զաշխարհ :

Փրկիչ իմ Յիսուս, որ յօժարութեամբ բարձեր 'ի յուս զխաչափայտն՝ զոր ես ինքն մեղօք իմովք կազմեցի. բայց զմիտս իմ զի ծանեայց զծանրութիւն մեղաց իմոց, և զզջացայց 'ի նոցունց ցորչափ իցեմ կենդանի :

Հայր մեր : Ողջոյն :

Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ :

Աղաչեմ ըզքեզ փրկիչ իմ Յիսուս,
Որ վասն յանցանաց իմոց խաչ 'ի
յուս,
Ի յանդորրոյն դահճաց շըրջապահ,

Որպէս գառն անպարտ վարեցար 'ի
մահ .
Տուր պարտաւորիս մեղօք բազմա֊
բիւր ,
Տանել վասըն քո վշտաց մըտադիւր:

ՀԱՆԳԻՍՏ ԵՐՐՈՐԴ

Յիսուս [illegible] յառաջին անկանի յերկիր :

Երկրպագեմք քեզ, Քս, և օրհնեմք
զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր
զաշխարհ :

Փրկիչ իմ Յիսուս, որ բարձեալ
զփայտ խաչին՝ ընդ ծանու բեռամբն

անկար 'ի յերկիր, մեղայ քեզ. գարշիմ և մերժիմ յամենայն մեղաց իմոց, և բոլորով սրտիւ խնդրեմ 'ի քէն զթողութիւն, ոչ ես կամելով յայամձեալ մեղանչել քեզ :

Հայր մեր : Ողջոյն :

Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ :

Փրկիչ իմ Յիսուս, առ քեզ պաղա-
տիմ,
Որ հաղկեալ յանգութ 'ի գահճաց
վառն իմ,
Ընդ խաչափայտին բևեռք ծանրա-
կիր
'Նուաղեալ անկար խոնարհ 'ի յեր-
կիր .

Ներեա յանցանաց անօրինելոյս ,
Զորս ընդ փայտ խաչին բերէիր 'ի
յուս :

### ՀԱՆԳԻՍՏ ՉՈՐՐՈՐԴ

Ընդ առաջ ելանէ Յիսուսի մայրն
ամենասուրբ :

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհ-
նեմք զքեզ ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր
զաշխարհ :

Մայր ցաւագին , որ ընդ փրկչին խնամ չարչարելոյ վասն իմ յան-դունդս ցաւոց ընկղմեցար , թո՛ղ ինձ , զի ես ինքն չարչարանաց և ցաւոց

ձերոց եղէ պատճառ՝ անօրինեալ մեղօք մինչև ցայսօր․ այլ յայսմհետէ շնորհօք միածնի քո զգաստացայց 'ի չարեաց, և մինչև ցմահ կացից և մնացից 'ի սէր ձեր ։

Հայր մեր ։ Ողջոյն ։

Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ ։

Փոխանակ վշտաց քոյ մայր ցաւագին,
Զոր կրեցեր 'ի տես որդւոյդ միածնի,
Մինչ բարձեալ 'ի յուս բերելով
Նա զխաչ,
Թաթաւեալ արեամբ եւ քեզ ընդ-
առաջ,
Տուր ինձ 'ի մեղաց 'ի բաց կալ 'ի
սպառ,

Որ նորխմբք վշտաց եղէ քեզ պատճառ :

### ՀԱՆԳԻՍՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### Սիմոն Կիւրենացի օգնէ Յիսուսի 'ի բառնալ խաչին :

Երկրպագեմք քեզ, Քս՜, և օրհնեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհ :

Փրկիչ իմ Յիսուս, երանեմ զկիւրենացին զի օգնական եղև քեզ 'ի բառնալ զխաչափայտն . այլ երանելի ես զանձն համարիմ եթէ լիցի ինձ բառնալ ընդ քեզ զխաչ, կամաւոր համ-

բերութեամբ տանելով վշտաց՝ զորս դու՛ն առաքեսցես ինձ 'ի կենցաղումս ։ Վասն որոյ աղաչեմ զքեզ, տէր իմ Յիսուս, տո՛ւր ինձ շնորհս զի համբերել կարացից ։

Հայր մեր ։ Ողջոյն ։

Ողորմեա՛ մեզ, տէր, ողորմեա մեզ ։

Ընդ կիւրենացւոյն ցանկամ խաչ
'ի յուս
Ըզհետ քո գնալ, փրկիչ իմ Յիսուս.
Ոչ պահակօրէն բարձեալ նայապէս,
Այլ մինչև 'ի սպառ տանել զայն
ընդ քեզ.
Կրեցից կամակար վիշտըս բազմա-
դէմ,

Քան թէ մեղանչել սիրոյ քո ընդ դէմ։

## ՀԱՆԳԻՍՏ ՎԵՑԵՐՈՐԴ

### Վերոնիկէ սրբէ զերեսն Յիսուսի ։

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհնեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհ ։

Մարդասէր փրկիչ իմ Յիսուս, որ հաճեցար զաստուածային կերպարանս քո տպաւորել 'ի Թաշկինակին՝ որով սրբէր Վերոնիկա զքրտունս

քո, տպաւորեա 'ի սրտի խնամով յի-
շատակ գառնականին չարչարանաց
քոց :

Հայր մեր : Ողջոյն :

Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ :

Ըղձիւք ընդ կրնողն առ քեզ, փրկիչ
իմ,
Ըզքրիստոսեան արեանդ 'ի սրբել մաս-
չիմ,
Որ զաստուածահրաշ գծմաց քոց
պատկեր
Խկարչամակին թողուլ յանձն առեր.
Տուր ինձ ըզմայլել սիրով քո 'ի նոյն,
Եւ չհայել յարատ յարաբած համ-
բուն :

## ՀԱՆԳԻՍՏ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Յիսուս երկրորդ անգամ անկանի յերկիր :

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհնեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհ :

Փրկիչ իմ Յիսուս, որ վասն ծանրութեան մեղաց իմոց միւսանգամ ընդ բեռամբ խաչին անկար յերկիր, աղաչեմ զքեզ օգնեա ինձ, զի զօրացեալ շնորհօք քովք՝ մի ևս դարձայց ՚ի մեղս :

Հայր մեր։ Ողջոյն։
Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ։

Փրկիչ իմ Յիսուս, դու ընդ ձեր կըր-
կին
Անկար 'ի յերկիր ընդ բեռամբ խա-
չին,
Բայց զի ես 'ի մեղս հանապազ 'ի
նոյն
Դառնամ որպէս որդն 'ի զազիրն
իւր բոյն.
Տո՛ւր ինձ զօրութիւն, զի մի ես 'ի
քեզ
Մեղայց յայսմհետէ կամաւորապէս։

## ՀԱՆԳԻՍՏ ՈՒԹԵՐՈՐԴ

### ՄԽԻԹԱՐԷ ՅԻՍՈՒՍ ԿԱՆԱՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ։

*Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհնեմք զքեզ,*
*Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհ։*

*Փրկիչ իմ Յիսուս, որ սփոփեցեր զբարեպաշտիկ դստերս Երուսաղէմի՝ որ լային 'ի տեսիլ չարչարանաց քոց, մխիթարեա զհոգի իմ հոգևոր ուրախութեամբ, որով զօրացեալ կարացից կալ միշտ 'ի պատուիրանի քում։*

Հայր մեր։ Ողջոյն։
Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ։

Ընդ սրբոց կանանց հեղեալ ար-
տասուս
Եւ զիւղն որ հեղում ընկալ, տէր Յի-
սուս.
Որ առ 'ի փրկել զիս հարար ան-
մեղդ,
Ընդ ցամաք փայտիս սոտ գալարա-
գեղ.
Տուր ինձ յայսմհետէ գարշել 'ի մե-
ղաց,
Որովք գործակից եղէ քոց դահճաց։

## ՀԱՆԳԻՍՏ ԻՆՆԵՐՈՐԴ

Յիսուս երրորդ անգամ անկանի ընդ բեռամբ խաչին ։

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհնեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհ ։

Փրկիչ իմ Յս՛, որ երրորդ անգամ անկար յերկիր ընդ ծանրակիր բեռամբ խաչին, աղաչեմ զքեզ, վասն չարչարանացդ քոց օգնեա ինձ, զի մի ես մեղայց քեզ։ Այս տէր, լաւ է

Ինձ մեռանել քան միւսանգամ մե_
ղանչել քեզ ։

Հայր մեր ։ Ողջոյն ։

Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ ։

Ընդ անկումն քո զայս երիցս անգամ,
Փրկիչ իմ Յիսուս, զարհուրեալ դո_
ղամ.
Ընդէր սիրտ իմ ոչ մորմոքի 'ի քեզ,
Եւ անկարեկիր վշտացդ եմ 'ի տես.
Տուր ինձ, որ վասն իմ Նուաղեալդ
'ի վշտա,
Ի սրտի իմում կրել ըզքեզ միշտ ։

## ՀԱՆԳԻՍՏ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Մերձաւորութիւնն զՅիսուսի և արքայութիւնն նմա ընդէ :

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհնեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհ :

Փրկիչ իմ Յիսուս, վասն դահճացն մերկացուցանելոյ զքեզ, և վասն լեղւոյն դառնութեան՝ զոր արբեր, մերկացո յինէն զամենայն խղձս երկրաւորս, և տուր ինձ շնորհօք քո

հրաժարել յամենայն աշխարհական
և 'ի մեղանչական զբօսանաց։

Հայր մեր։ Ողջոյն։

Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ։

Որ վասն իմ պատժեալ, փրկիչ իմ
և տէր,
Ի վերայ խաչին ըղեղին արբեր,
Ներեա ինձ որ զայն քեզ դառըն բա-
ժակ
Խառնեալ մատուցի մեղօքս 'ի Ճաշակ.
Ինձ այսուհետև տուր սէր քո միայն
Քաղցրասցին 'ի սպառ դառնինք ա-
մենայն։

## ՀԱՆԳԻՍՏ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### Զցաւոց բևեռանն 'ի խաչին։

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհ-
նեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր
զաշխարհ։

Փրկիչ իմ Յիսուս, վասն դժնդակ ցաւոցդ՝ զոր կրեցեր 'ի բևեռելն քո 'ի խաչին ստուարասուր բևեռօք, տուր ինձ շնորհօք սուրբ Հոգւոյդ 'ի խաչ հանել զմարմին իմ մեռելութեամբ մեղաց։

Հայր մեր ։ Ողջոյն ։
Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ ։

Որ տարածեցար ՚ի վերայ խաչին
Յանողորմ դաՀճաց քոյդ ձգեալ մարմին,
Եւ ՚ի ստուարաստուր Հարար ՚ի Հեղոյս,
Բեւեռեալ ՚ի նմա ընդ մեղուցելոյս ։
Մի՛ անտես առներ զըստեղծուած քոյին,
Որ վերաստացար զայն յոյժ ծանրագին ։

## ՀԱՆԳԻՍՏ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### Յիսուս մեռանի 'ի խաչին ։

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհ.
нեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր
զաշխարհ ։

Փրկիչ իմ Յիսուս, որ զժամս երիս 'ի տագնապի եղեալ վասն իմ՝ մեռար 'ի վերայ խաչին, աղաչեմ ըզքեզ՝ տուր շնորհօք քովք յանձն առնուլ զմահ քան անցանել զպատուիրանաւ քով. որպէս զի զամենայն աւուրս կենաց իմոց զոր պարգևեսցես

ինձ, կեցից 'ի սիրել զքեզ միայն և
'ի ծառայել քեզ սրտի մտօք:

Հայր մեր: Ողջոյն:

Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ:

Ահա 'ի կատար Գողգոթայ լերին
Տեսանեմ կանգնեալ զփայտ պա-
տուհասին,
Կախեալ 'ի նմա տէրդ ըղբնեռաց,
Մեռանիս վասն իմ, ո՛վ անմահդ Աս-
տուած.
Ո՛հ, թէ ոչ 'ի քեզ սիրտ իմ մոր-
մոքի,
Խիստ եմ քան ըղժայռ, զխակն ան-
հոգի:

## ՀԱՆԳԻՍՏ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### Իջուցանեն զՅիսուս 'ի խաչէն և դնեն 'ի գիրկս Տիրամօրն ։

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհ-նեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհ ։

Մայր ցաւագին, ո՜վ դառնակսկիծ ցաւոցն՝ որ իբրև զսուր անց ընդ անձն քո յընդունել զանշնչացեալ մարմին միածնիդ 'ի գիրկս քո, ա-ղաչեմ զքեզ, բարեխօս լեր վասն իմ զի դարձեցայց 'ի մեղաց՝ վասն որոյ յանձն էառ նա զմահ խաչին, և

դու ինքն բազում ցաւովք վշտացար, և տո՛ւր ինձ կեալ յայսմհետէ արժանի քրիստոնէական շնորհիս առ ՚ի ժառանգել զկեանս յաւիտենից:

Հայր մեր: Ողջոյն:

Ողորմեա մեզ, տէր, ողորմեա մեզ:

Ընդ բարեպարիշտ արեմաթացւոյն
Քեզ ըղձիւք զղապաս հարկանեմ
ըղձոյն,
Որ զմարմին քո սուրբ վասն իմ տի-
գախոց
Պատեաց կտաւովք ընդ անոյշ խըն-
կոյ:
Տո՛ւր ինձ անսասան ՚ի հաւատս ՚ի
սպառ,

Լինել քեզ փրկչիդ քարոզ անպատ_
կառ :

## ՀԱՆԳԻՍՏ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### ԶՅիսուս տանին 'ի գերեզմանի :

Երկրպագեմք քեզ, Քրիստոս, և օրհ_
նեմք զքեզ,
Որ խաչիւդ քով սրբով փրկեցեր
զաշխարհ :

Փրկիչ իմ Յիսուս, ցանկամ մաշա_
կից լինել ընդ քեզ. և կեալ 'ի քեզ
մինչ 'ի սպառ, ցորչափ իցեմ կենդա_
նի, որպէս զի յետ սատի կենացս

արժանի եղէց մտանել յերկինս ,
զորոյ բացեր ինձ զդրունս չարչա_
րանօք քովք և մահուամբ ։

Հայր մեր ։ Ողջոյն ։

Ողորմեա մեզ , տէր , ողորմեա մեզ ։

Փրկիչ իմ Յն, քեզ երկրպագեմ
Բազմելոյդ յերկինս , որ ծածկիդ
'ի վեմ.
Ընդ իւղաբերից կանանցն արտա_
սուս ։
Ընկալ զհառաչանս ըղձեղուցելոյս ։
Թաղեսցի ընդ քեզ սիրտ իմ սա_
տանօր ,
Մի ինչ յայսմհետէ սիրել երկրա_
ւոր ,

Այլ յիշատակաւ մահուան քո յա-
ւէտ
Գոհանալ 'ի սպառ ըղձաբերաբէգ :
Մեղայ տէր մեղայ, և մեղք իմ բա-
զում
Եղեն մահառիթ քեզ փրկչիդ ի-
մում.
Այլ այսուհետև մեռայց կամակար,
Քան քեզ մեղանչել փրկիչ բարե-
բար :

Երգ :

Սաւեղնեալ ծառոյ մահաբերին ,
Այնմ որ բուսաւ 'ի մէջ դրախ-
տին ,

փոխան բարձեր ըղձիայս խաչին,
Ի Գողգոթայ հաներ տեղին.
Զիմ՛ առ 'ի մեղս անկեալ զոգի
Նու ծանրագոյն բարձող բեռին,
Բարձ 'ի յուսիդ ըստ ոչխարին,
Հան 'ի յերկինս յուխտեալ տե-
ղին ։
Յանմահից մեռանելոյ
Զմեռեալ հոգիս կենդանացո.
Թաղմամբ 'ի նոր գերեզմանի
Զթաղեալս 'ի մեղս վերածեա.
Ի գրի ներքնումս իջանելով
Ի գերոյ մեղաց վերաբերեա.
Ի ստուեր մահու քո բնակելով
Լուսաւորեա և զիս հոգւով։
Սերտ իմ՛ առ քեզ աղաղակէ,

Բա՛ն որ ընդ Հօր ՚ի սկզբանէ,
Որ կամաւոր վասն մարդկան
Կրեցեր մարմնով զայս ամենայն.
Ինձ լսելի արա ըղձայն
Յարքայութեանդ քո կոչման.
Ընդ ժողովոց անդ անդրանկաց
Օրհնել ընդ քեզ միշտ յաւիտեան:

Ըստ գիտաւորութեան սրբազան քահանայապետին Ա. Ա. ասասցուք միանգամ՝ զտէրունական աղօթս, հանդերձ հրեշտակային ողջունիւն:

Հայր մեր: Ողջոյն:

Սուրբ խաչիւս աղաչեսցուք:
Պահպանեա զմեզ, Քրիստոս Աս-
տուած մեր, ընդ:

### Մողթանք ·Թէրթողին ։

Ե՛կ էջ Հոգիդ սուրբ 'ի յերկնից ,
Զանշունչ ըզտառս իմ զայսոսիկ
Դու եօթնարփեան շնորհօք քո լից ·
Ոչ իբր 'ի քերթս տաղերական
Վերծանողացըն սափերիս
Իխսակել զիմաստս որ 'ի սմա կան ,
Այլ սէրափին վառեալ 'ի բոց ,
Բարեբանել սրբօք յաւէրժ
Րամիցն 'ի տիպ ըզքեզ վերնոց ։
Դրոշմեա ըզկնիք քո 'ի սոսին ,
Եւ զհոգեբուղխ բանից շընորհ
Հեղ ըզսոքօք օծմամբ քոյին ·
Իբր ըզխընկոց ծուխ 'ի յեթեր

Բուրեղ սոցին, և անուշից
Իւղոց առ քեզ ելք ըղձենձներ :
Բարուճական 'ի տիղ խրատուն
Վարժեալքն 'ի սմա շնորհիւ քոյին
Մաղթել յաւէրժ և կալ արթուն,
Ի կենցաղոյս փորձութեանց զերծք
Լիցին սրբոցըն պարակից
Իւստապարակէք ածամերձք :
Զաղօթական քարոխ պուէա,
Որ աղօթից ենքն եմ կարօտ
Եւ 'ի ընաւից բարեաց անպէտ,
Աղօթակցացն 'ի սմա ընդ ես
Արա Հոգիդ սուրբ մասնակից,
Նպաստիւք նոցին անարժանիս :

# ՑԱՆԿ

## ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ


Աղօթք տէրունական . . . . . . . . 1
Աւետիք հրեշտակապետին . . . . . . 3
Աղօթք առաւօտին . . . . . . . . 4
Դաւանութիւն հաւատոյ . . . . . . 6
Խոստովանութիւն յուսոյ . . . . . . 7
Խոստովանութիւն սիրոյ . . . . . . 8
Խոստովանութիւն զղջման . . . . . . 9
Առաջի սրբոյ խաչին . . . . . . . 10
Երգ սուրբ Աստուածածնի . . . . . . 11
Յորդորակ . . . . . . . . . 13
Առ տիրամայրն խղձք խանդաղատելի . . 15


## ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՐԻՆ


Խղձք զղջականք . . . . . . . . 19
Ի չարչարանսն Քրիստոսի . . . . . . 21

Առ որ տիրամայրն , աստուածորդւոյն 'ի գիրկս իւր, իղձք . . . . . . . . 26
Իղձք ցաւակցութեան եօթանց ցաւոց որ Աստուածածնին . . . . . . 30
Ի կիւրակէի . . . . . . . . . —
Յերկուշաբաթի . . . . . . . . —
Յերեքշաբաթի. . . . . . . . . 31
Ի չորեքշաբաթի . . . . . . . . —
Ի հինգշաբաթի . . . . . . . . —
Յուրբաթու. . . . . . . . . . 32
Ի շաբաթու . . . . . . . . . —
Վասն ննջեցելոց . . . . . . . . 33

Աղօթք նախ քան զխոստովանութիւն . . 39
Աղօթք զղջման . . . . . . . . 42
Զկնի խոստովանութեան . . . . . 43
Յետ հաղորդութեան . . . . . . 47

Աղօթք առ Հայր երկնաւոր 'ի ժամ պատարագի . . . . . . . . . 49
Առ տէր Յիսուս մաղթանք կարևորք . . 53
Առ սուրբ Հոգին . . . . . . . . 60

Աղօթք ՚ի հզօր անուանն Մարիամու . . 65
Վասն պայմանի կենաց ընտրութեան . 67
Ընծին նուիրելոյ առ Ած խղճք մշտամը-
ռունչք . . . . . . . . . . 68
Յորդորակ . . . . . . . . . . 69
Վասն ծնողաց և ազգականաց . . . .
Ընդդէմ փորձութեան . . . . . . 76
Պատրաստութիւն առ ՚ի մահ . . . . 77
Առ տէր Յիսուս վ̃ս բարւոք մեռանելոյ . 79
Առ հրեշտակս և հրեշտակապետս . . 84
Առ սր̃ հրեշտակն պահապան . . . .
Առ սր̃ նախահարս . . . . . . . 88
Առ սր̃ կարապետն . . . . . . . 90
Առ սր̃ Աստուածահայրն . . . . . 91
Առ սր̃ նախավկայն . . . . . . . 94
Առ սր̃ Առաքեալս . . . . . . . 97
Առ սր̃ Լուսաւորիչն . . . . . . 99
Առ սր̃ հայրապետն Մծբնայ . . . . 100
Առ սր̃ն Սահակ Պարթև . . . . . 101
Առ սր̃ն Անտոն անապատականն . . . 103
Առ սր̃ն Նիկողայոս . . . . . . . 104
Առ սր̃ Ոսկեբերանն . . . . . . . 105
Առ սրբուհի Մագդաղենացին . . . 107

Առ սբ կոյսն Հռիփսիմէ . . . . . 108
Առ սբ զօրավարն Գէորգ . . . . . 110

ԱՂՕԹՔ Ի ՍԱՂՄՈՍԱՑ

Սաղմոս Ա. . . . . . . . . . . 113
Սաղմոս Բ. . . . . . . . . . . 115
Սաղմոս Գ. . . . . . . . . . . 119
Սաղմոս Դ. . . . . . . . . . . 121
Սաղմոս ԾԼԲ. . . . . . . . . . 124
Ի Սաղմոսն ԾԼԶ. երգ յարտասուական . . 125
Օրհնութիւն Ծերունւոյն Սիմէոնի . . 132

Գոհութիւն 'ի վերջ տարւոյ . . . . —
Ճանապարհ սրբոյ խաչին . . . . . 135
Մաղթանք Փէրթողին . . . . . . 167

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1928
Мясни...
ՄՅԱՍ... ՅԱՆԻ ԱՆՎԱՆ




Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻՆ 1843 ՌՄՂԲ

rue Sophie hotel
Mecklembourg

10n